

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏԵԴԵԿԱԳԻՐ ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И

НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНИИ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

Հատոր 75

N 1

ՀՈՒՆՎԱՐ – ՄԱՐՏ

ԵՐԵՎԱՆ 2022

ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И
НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНИИ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

Том 75

N 1

ЯНВАРЬ – МАРТ

ЕРЕВАН 2022

PROCEEDINGS

OF THE REPUBLIC OF ARMENIA NATIONAL ACADEMY OF
SCIENCES AND NATIONAL POLYTECHNIC UNIVERSITY OF
ARMENIA

SERIES OF TECHNICAL SCIENCES

Volume 75

N 1

JENUARY - MARCH

YEREVAN 2022

Журнал издается с 5.01.1948 г.

Выходит 4 раза в год

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Գլխավոր խմբագիր՝ Մելիքյան Վ.Շ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Գրիգորյան Ա.Խ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Պատասխանատու քարտուղար՝ Մեյրանյան Ժ.Ս., ՀՀ
Խմբագրական կոլեգիա՝
Աղբալյան Ս.Գ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Ասլանյան Լ.Հ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆ.-մ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Բաղդասարյան Ն.Պ., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Բաղդասարյան Հ.Վ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Բաղդասարյան Ս.Ք., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Գագարինսկի Ա.Յու., ֆ.-մ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Գոնեւմա Ս., տ.գ.թ., Եգիպտոս
Գրիմբլաթ Վ., տ.գ.թ., Չիլի
Դոկիչ Բ., տ.գ.դ., Բոսնիա և Հերցեգովինա
Ջորյան Ե., տ.գ.թ., ԱՄՆ
Իյուշենկո Ա.Ֆ., Բելառուսի ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆ., Բելառուս
Լան Զ., տ.գ.թ., Չինաստան
Կրասնիկով Գ.Յ., ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Կուրտուա Բ., տ.գ.թ., Ֆրանսիա
Հախումյան Ա.Ա., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆ.-մ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Հակոբյան Վ.Ն., ֆ.-մ.գ.դ., ՀՀ
Հահանով Վ.Ի., Կիրառական ռադիոէլեկտրոնիկայի Ուկրաինայի ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ.,
Ուկրաինա
Ղույան Ա.Գ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.-մ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Մանդալիկա Ս., տ.գ.թ., Հնդկաստան
Մարուխյան Ռ.Զ., տ.գ.թ., պրոֆ., ՀՀ
Միխայլենիչ Ա.Ա., տ.գ.դ., պրոֆ., Բելառուս
Շիխտման Ու., տ.գ.թ., Գերմանիա
Չանգ Ֆ., Թայվանի ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., Թայվան
Չապլիգին Յու.Ա., ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Պետրոսյան Օ.Հ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Պետրոսյանց Կ.Օ., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Սապատնեկար Ս., տ.գ.թ., ԱՄՆ
Մարգարյան Յու.Լ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Սքիտնն Ս.Ա., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Միմոնյան Ս.Հ., տ.գ.դ., պրոֆ., ՀՀ
Ստեմպկովսկի Ա.Լ., ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Վորոբյով Ա.Ե., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ
Տիխոմիրով Գ.Վ., ֆ.-մ.գ.դ., ՌԴ
Ցանովա Ս., տ.գ.թ., Բուլղարիա
Ուբար Բ., Էստոնիայի ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆ., Էստոնիա
Ուսանով Վ.Ի., տ.գ.դ., պրոֆ., ՌԴ

EDITORIAL BOARD

Editor-in-Chief: Melikyan V.Sh., Corr.member of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Deputy Editor-in-Chief: Grigoryan A.Kh., Sci.Dr., Prof., Armenia
Executive Secretary: Seyranyan Zh.S., Armenia
Editorial Board:
Aghbalyan S.G., Sci.Dr., Prof., Armenia
Aslanyan L.H., Corr.member of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Badalyan N.P., Sci.Dr., Prof., Russia
Baghdasaryan H.V., Sci.Dr., Prof., Armenia
Baghdasaryan M.Q., Sci.Dr., Prof., Armenia
Chang F., Member of National Academy of Taiwan, Sci.Dr., Taiwan
Chaplygin Yu.A., Academician of RAS, Sci.Dr., Prof., Russia
Courtois B., Ph.D., France
Dokic B., Sci.Dr., Bosnia and Herzegovina
Gagarinski A.Yu., Sci.Dr., Prof., Russia
Ghoneima M., Ph.Dr., Egypt
Ghulyan A.G., Academician of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Grimblatt V., Ph.Dr., Chile
Hahanov V.I., Academician of Academy of Sciences of Ukraine in Applied Radioelectronics, Sci.Dr., Prof., Ukraine
Hakhumyan A.A., Corr.member of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Hakobyan V.N., Sci.Dr., Armenia
Ilyushenko A.F., Corr.member of NAS of Belarus, Sci.Dr., Prof., Belarus
Krasnikov G.Y., Academician of RAS, Sci.Dr., Prof., Russia
Lan Ch., Ph.Dr., China
Mandalika S., Ph.Dr., India
Marukhyan V.Z., Ph.Dr., Prof., Armenia
Mikhaylevich A.A., Sci.Dr., Prof., Belarus
Petrosyan O.H., Sci.Dr., Prof., Armenia
Petrosyants K.O., Sci.Dr., Prof., Russia
Sapatnekar S., Ph.Dr., USA
Sargsyan Yu.L., Academician of NAS RA, Sci.Dr., Prof., Armenia
Sbitnev S.A., Sci.Dr., Prof., Russia
Schlichtmann U., Ph.Dr., Germany
Simonyan S.H., Sci.Dr., Prof., Armenia
Stempkovski A.L., Academician of RAS, Sci.Dr., Prof., Russia
Tikhomirov G.V., Sci.Dr., Russia
Tsanova S., Sci.Dr., Bulgaria
Ubar R., Academician of Academy of Sciences of Estonia, Sci.Dr., Prof., Estonia
Usanov V.I., Sci.Dr., Prof., Russia
Vorobyov A.Y., Sci.Dr., Prof., Russia
Zorian Y., Ph.Dr., USA

Հրատ. խմբագիր՝

Խմբագիրներ՝

Ժ.Ս. ՄԵՅՐԱՆՅԱՆ

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

© Издательство НПУА

Известия НАН РА и НПУА (сер. Техн. наук), 2022

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Главный редактор Меликян В.Ш., член-корр. НАН РА, д.т.н., проф., Армения

Заместитель главного редактора Григорян А.Х., д.т.н., проф., Армения

Ответственный секретарь Сейранян Ж.С., Армения

Редколлегия:

Агбалян С.Г., д.т.н., проф., Армения

Акопян В.Н., д.ф.-м.н., Армения

Асланиян Л.А., член-корр. НАН РА, д.ф.-м.н., проф., Армения

Ахумян А.А., член-корр. НАН РА, д.ф.-м.н., проф., Армения

Багдасарян М.К., д.т.н., проф., Армения

Багдасарян О.В., д.т.н., проф., Армения

Бадалян Н.П., д.т.н., проф., Россия

Воробьев А.Е., д.т.н., проф., Россия

Гагаринский А.Ю., д.ф.-м.н., проф., Россия

Гонейма М., к.т.н., Египет

Гримблат В., к.т.н., Чили

Гулян А.Г., академик НАН РА, д.ф.-м.н., проф., Армения

Докич Б., д.т.н., Босния и Герцеговина

Зорян Е., к.т.н., США

Ильющенко А.Ф., член-корр. НАН Беларуси, д.т.н., проф., Беларусь

Красников Г.Я., академик РАН, д.т.н., проф., Россия

Куртуа Б., к.т.н., Франция

Лан Ч., к.т.н., Китай

Мандалика С., к.т.н., Индия

Марухян В.З., к.т.н., проф., Армения

Михайлович А.А., д.т.н., проф., Беларусь

Петросян О.А., д.т.н., проф., Армения

Петросянц К.О., д.т.н., проф., Россия

Сапатнекар С., к.т.н., США

Саркисян Ю.Л., академик НАН РА, д.т.н., проф., Армения

Сбитнев С.А., д.т.н., проф., Россия

Симонян С.О., д.т.н., проф., Армения

Стемпковский А.Л., академик РАН, д.т.н., проф., Россия

Тихомиров Г.В., д.ф.-м.н., Россия

Убар Р., академик НАН Эстонии, д.т.н., проф., Эстония

Усанов В.И., д.т.н., проф., Россия

Хаханов В.И., академик Академии наук Украины по прикладной радиоэлектронике, д.т.н., проф., Украина

Цанова С., к.т.н., Болгария

Чанг Ф., академик Национальной академии Тайваня, д.т.н., Тайвань

Чаплыгин Ю.А., академик РАН, д.т.н., проф., Россия

Шлихтманн У., к.т.н., Германия

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И НАЦИОНАЛЬНОГО
ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

PROCEEDINGS

OF THE REPUBLIC OF ARMENIA NATIONAL ACADEMY OF SCIENCES AND
NATIONAL POLYTECHNIC UNIVERSITY OF ARMENIA

SERIES OF TECHNICAL SCIENCES

2022

1

ՀԱՏՈՐ

TOM 75
VOLUME

ՀՈՒՆՎԱՐ - ՄԱՐՏ

ЯНВАРЬ – МАРТ
JENUARY - MARCH

Հրատ. Խմբագիր՝

Խմբագիրներ՝

ԺԱՆՆԱ Ս. ՄԵՅՐԱՅԱՆ

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ստորագրված է տպագրության՝ 07.06.2022

Թուղթը՝ «օֆսեթ»։ Տպագրությունը՝ դիզոն: Ֆորմատ՝ (70×100) 1/16:

Շարվածքը՝ համակարգչային:

Տառատեսակը՝ Sylfaen, Times New Roman: 10.25 տպ. մամ.:

Պատվեր՝ 136: Տպաքանակ՝ 200

Հայաստանի Ազգային

Պոլիտեխնիկական

Համալսարանի

«Պոլիտեխնիկ»

տպագրահրատարակչություն

Երևան, Տերյան 105

Типографско-

издательский центр

«Политехник»

Национального

политехнического

университета Армении

Ереван, ул. Теряна 105,

“Polytechnic” Publishing – House

National Polytechnic University of
Armenia

105 Teryan str. Yerevan

polytechpolygraph@gmail.com

Գ.Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հ.Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Մ.Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ա.Ա. ԲԱԲԱՅԱՆ
ԵՌԱԿԱԼ ՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԱԶԵՎ ԿԼՈՐ ՁՈՂԻ ԱՐՏԱՄՂՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԴԵՖՈՐՄԱՑԻՈՆ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ

Մոդելավորվել է եռակալված կլոր հատույթով աստիճանաձև նմուշի արտամղման չկայունացված գործընթացի սկզբնական ժամանակաշրջանի դեպքը «ABAQUS» ավտոմատացված ծրագրային միջավայրում: Գլանական նմուշի վերնի ճակատը ուղղահայաց ուղղությամբ հավասարաչափ տեղափոխվել է, որի հետևանքով այն դեֆորմացվել է: Ստացվել են Միզեսի լարման, դեֆորմացիաների ինտենսիվության, դեֆորմացիոն վիճակի բաղադրիչների և նյութի ծակոտկենության բաշխման գոտիները: Որոշվել են մամլամայր մտնելիս ($e-e$) և մամլամայրից դուրս գալիս ($ա-ա$) յոթական հանգույցների, դրանցից վերնի ու ներքնի վեցական տարրերի տվյալները: Բոլոր դեֆորմացիաների բաղադրիչները ծայրագույն արժեքներին հասնում են կոնական մամլամայրի հետ ձողի հպման գոտիներում:


Դրանք հնարավորություն են տվել կառուցել $e-e$ և $ա-ա$ հատույթների վերնի տարրերի տվյալներով դեֆորմացիաների բաղադրիչների և դրանց հանգույցների ծակոտկենության փոփոխության գրաֆիկները: Դրանցից ամենամեծերը $e-e$ - ի գոտում սահքի և առանցքային սեղմող դեֆորմացիաներն են: $ա-ա$ - ի գոտում սահքի դեֆորմացիաները $e-e$ - ի նկատմամբ շատ փոքր են և փոխել են իրենց նշանը: Մյուս տվյալները որակապես համընկնում են ՅBM EC 1022 – ի վրա ՓՕՊԵԱԿ – IV ալգորիթական լեզվով կազմված ծրագրով հաշվարկված տվյալների հետ:

Առանցքային բառեր. եռակալված նյութ, ծակոտկենություն, արտամղում, դեֆորմացիոն վիճակ, համակարգչային մոդելավորում:

Ներածություն: Ներկայումս պլաստիկության տեսության տեխնոլոգիական խնդիրները լուծվում են վերլուծական մեթոդներով և ավտոմատացված ծրագրային միջավայրում (ԱՕՄ) մոդելավորմամբ: Եռակալված նյութից զլանական նախապատրաստվածքների արտամղման գործընթացների հետազոտումը վերլուծական եղանակով բավականին բարդ է՝ քիչ հետազոտված նյութում ծակոտկենության առկայության պատճառով [1]: ԱՕՄ – ում մոդելավորումը հնարավորություն է տալիս կարճ ժամանակում ստանալ բավականին մեծ ճշտությամբ արդյունքներ: Մոդելավորման նպատակահարմարությունն ապացուցվել է բազմաթիվ գիտագործնական աշխատանքների արդյունքներով: Մասնավորապես, կարելի է նշել «ABAQUS» -ի միջավայրում կատարված [2,3] աշխատանքները: Երբեմն, կախված խնդիրների տեսակից, դրանց լուծումներում օգտագործում են վերլուծական եղա-

նակի և ԱԾՄ-ի համադրման մեթոդները [4]: Ընդ որում, ԱԾՄ – ում մոդելավորմամբ լուծված հետազոտությունների մեծ մասում, ինչպես նաև [2-4] – ում հիմնականում ուսումնասիրվել և վերլուծվել են տեխնոլոգիական գործընթացների լարվածային վիճակները:


[5,6] – ում, օգտագործելով [1] – ում բերված եռակալված նյութերի համար մշակված վերջավոր տարրերի մեթոդի (ՎՏՄ) առանձնահատկությունները, հետազոտվել է աստիճանաձև կլոր հատույթով ձողի արտամղման գործընթացի սկզբնական չկայունացված ժամանակաշրջանի դեպքը (նկ.1): Հիմնականում կատարվել են դեֆորմացիոն վիճակի հաշվարկներ՝ ՅՅՄ EC 1022 – ի վրա ՓՕՐՏԵԱԿ – IV ալգորիթմական լեզվով կազմված ծրագրով:



Նկ.1. Փոփոխական հատույթով դեֆորմացված գլանական նախապատրաստվածքի առանցքային հատույթը

Ինչպես տեսնում ենք, $e-e$ հատույթում նախապատրաստվածքի դեֆորմացիաների բաղադրիչները բավականին մեծ են $A-A$ – ում առաջացածների համեմատ: Ամենամեծ դեֆորմացիան սահքինն է, այնուհետև՝ առանցքայինը, որի նշանը $e-e$ – ում բացասական է (կարճացում), իսկ $A-A$ – ում՝ դրական (երկարացում): Սակայն բացակայում են տվյալները տեխնոլոգիական գործընթացի ամենակարևոր հպակային գոտու՝ վեցերորդ տարրի վերաբերյալ:

Նշենք, որ [6] – ում բերված կլոր հատույթով ձողի դեֆորմացիաների բաղադրիչների բաշխման նկ. 2 –ի տվյալներն օգտագործվել են մենուղորդված թելիկներով ամրանավորած բարձրորակ կոմպոզիցիոն նյութերի ստացման համար:



Նկ. 2. Առանցքային (1), շառավղային (2), շրջանային (3) և սահքի (4) դեֆորմացիաների գրաֆիկները (ա՝ e-e և բ՝ ժ-ժ հատույթների դեպքում)

Ինչ վերաբերում է այդ խնդրի ԱԾՄ – ում մոդելավորմանը, ապա այն ամբողջապես չի ուսումնասիրվել, հետևաբար՝ այդ ուղղությամբ աշխատանքներն արդիական են:

Աշխատանքի նպատակն է եռակալված նյութից գլանական աստիճանաձև ձողի արտամղման գործընթացի սկզբնական չկայունացված ժամանակաշրջանի դեֆորմացիոն վիճակի ԱԾՄ – ում մոդելավորմամբ հետազոտումը և ստացված արդյունքների համեմատումը ՅBM EC 1022 – ի վրա ՓՕՐՏԵԱԿ – IV ալգորիթմական լեզվով կազմված ծրագրով հաշվարկած տվյալների հետ:


Համակարգչային մոդելավորման սկզբնական տվյալներն են. ձողի չափսերը՝ e-e հատույթի շառավղի 22,8 մմ, ժ-ժ հատույթինը՝ 10 մմ, տեղափոխությունը մամլամայրում՝ 3 մմ: Հանգույցների քանակը՝ 70, տարրերի քանակը՝ 54 և տիպը՝ CAX4R: Հպակային շփման գործակիցը՝ 0,05: Աստիճանաձև ձողի նյութի խտությունը՝ 8000 կգ/մ³, Յունգի մոդուլը՝ 210 ԳՊա, Պուասսոնի գործակիցը՝ 0,3, ծակոտկենությունը՝ 16%, իսկ նյութի դեֆորմացման գրաֆիկի (ՆԴԳ) տվյալները ներկայացված են աղ.1 - ի տեսքով:

Աղյուսակ 1


ՆԴԳ տվյալները

$\sigma_{eq}, \text{ՄՊա}$	ε_{eq}
350	0
385	0,0125
466	0,025
663	0,1
730	0,20


Նկ. 3 - 6 – ում բերված են համակարգչային մոդելավորման սխեման, Միզեսի լարման, դեֆորմացիաների բաղադրիչների և նյութի ծակոտկենության բաշխման գոտիները:




Նկ. 3. Համակարգչային մոդելավորման սխեման և Միզեսի լարման բաշխման գոտիները



Նկ. 4. Դեֆորմացիաների ինտենսիվության և առանցքային դեֆորմացիայի բաշխման գոտիները



Նկ. 5. Շառավղայի և շրջանային դեֆորմացիաների բաշխման գոտիները



Նկ. 6. Սահբի դեֆորմացիայի և նյութի ծակոտկենության բաշխման գոտիները

ԱՕՄ մոդելավորման տվյալներով e-e և ժ-ժ հատույթների յոթ հանգույցներում և դրանց վերևի ու ներքևի տարրերում (նկ. 3-6) որոշվել են Միզեսի լարման, դեֆորմացիաների ինտենսիվության և բաղադրիչների, ինչպես նաև նյութի ծակոտկենության արժեքները (աղ. 2-7):

Աղյուսակ 2

e-e հատույթի վերևի տարրերի տվյալները

Տարր	S, Mises, σ_i	PEEQ, ε_i	PE11, ε_r	PE22, ε_z	PE33, ε_θ	PE12, γ_{rz}	VVF, v
1	2.93E+08	8.99E-02	2.27E-03	-6.46E-02	8.58E-05	2.45E-02	1.06E-01
2	3.63E+08	1.03E-01	6.69E-03	-7.46E-02	3.13E-03	6.22E-02	1.04E-01
3	4.30E+08	1.25E-01	1.50E-02	-8.91E-02	6.43E-03	1.13E-01	1.00E-01
4	4.88E+08	1.51E-01	2.06E-02	-1.00E-01	9.78E-03	1.77E-01	9.89E-02
5	5.55E+08	1.85E-01	2.75E-02	-1.12E-01	1.22E-02	2.47E-01	9.69E-02
6	5.56E+08	2.13E-01	9.06E-02	-1.89E-01	1.54E-02	1.54E-01	8.69E-02

e-e հատույթի հանգույցների տվյալները

Հանգույց	S, Mises, σ_i	PEEQ, ε_i	PE11, ε_r	PE22, ε_z	PE33, ε_θ	PE12, γ_{rz}	VVF, v
1	2.09E+08	8.00E-02	-9.87E-03	-3.80E-02	-1.10E-02	2.47E-02	1.09E-01
2	2.56E+08	8.67E-02	-9.09E-03	-4.15E-02	-1.03E-02	4.41E-02	1.07E-01
3	3.42E+08	1.03E-01	-6.08E-03	-5.00E-02	-8.70E-03	8.57E-02	1.04E-01
4	4.05E+08	1.22E-01	-3.99E-03	-5.71E-02	-7.19E-03	1.28E-01	1.00E-01
5	4.53E+08	1.43E-01	-7.90E-03	-5.73E-02	-6.84E-03	1.66E-01	9.72E-02
6	4.32E+08	1.63E-01	3.59E-03	-7.70E-02	-7.40E-03	1.44E-01	8.93E-02
7	3.87E+08	1.71E-01	1.89E-02	-9.85E-02	-7.65E-03	1.04E-01	8.34E-02

e-e հատույթի ներքնի տարրերի տվյալները

Տարր	S, Mises, σ_i	PEEQ, ε_i	PE11, ε_r	PE22, ε_z	PE33, ε_θ	PE12, γ_{rz}	VVF, v
1	1.24E+08	7.01E-02	-2.20E-02	-1.14E-02	-2.21E-02	2.50E-02	1.12E-01
2	2.42E+08	8.42E-02	-2.33E-02	-1.52E-02	-2.22E-02	6.46E-02	1.07E-01
3	3.33E+08	1.01E-01	-2.27E-02	-2.12E-02	-2.21E-02	1.03E-01	1.03E-01
4	3.71E+08	1.10E-01	-2.89E-02	-1.79E-02	-2.29E-02	1.18E-01	9.95E-02
5	4.00E+08	1.24E-01	-5.09E-02	9.70E-04	-2.65E-02	1.22E-01	9.34E-02
6	2.18E+08	1.28E-01	-5.29E-02	-7.60E-03	-3.07E-02	5.35E-02	7.98E-02

դ-դ հատույթի վերնի տարրերի տվյալները

Տարր	S, Mises, σ_i	PEEQ, ε_i	PE11, ε_r	PE22, ε_z	PE33, ε_θ	PE12, γ_{rz}	VVF, v
1	1.88E+08	1.99E-02	-1.11E-02	8.32E-03	-1.06E-02	-3.76E-03	1.49E-01
2	2.37E+08	2.40E-02	-1.43E-02	1.15E-02	-1.22E-02	-1.03E-02	1.47E-01
3	2.94E+08	3.20E-02	-2.16E-02	1.98E-02	-1.47E-02	-1.68E-02	1.46E-01
4	3.37E+08	4.33E-02	-3.14E-02	2.92E-02	-1.85E-02	-2.00E-02	1.43E-01
5	3.94E+08	5.76E-02	-4.35E-02	4.53E-02	-2.32E-02	-3.03E-02	1.42E-01
6	4.60E+08	7.65E-02	-5.66E-02	7.94E-02	-3.00E-02	-3.28E-03	1.56E-01

Աղյուսակ 6

Դ-ճ հատույթի հանգույցների տվյալները


Հանգույց	S, Mises, σ_i	PEEQ, ε_i	PE11, ε_r	PE22, ε_z	PE33, ε_θ	PE12, γ_{rz}	VVF, v
1	2.19E+08	1.20E-02	-4.61E-03	1.79E-03	-4.47E-03	-1.41E-03	1.54E-01
2	2.35E+08	1.31E-02	-5.33E-03	2.57E-03	-4.81E-03	-2.95E-03	1.54E-01
3	2.67E+08	1.64E-02	-7.64E-03	5.23E-03	-5.73E-03	-6.07E-03	1.53E-01
4	2.93E+08	2.09E-02	-1.20E-02	1.01E-02	-7.27E-03	-8.50E-03	1.52E-01
5	3.12E+08	2.86E-02	-1.73E-02	1.73E-02	-9.32E-03	-8.19E-03	1.52E-01
6	3.51E+08	4.10E-02	-2.31E-02	3.05E-02	-1.20E-02	4.27E-03	1.56E-01
7	3.79E+08	4.81E-02	-2.65E-02	3.95E-02	-1.37E-02	1.56E-02	1.60E-01

Աղյուսակ 7

Դ-ճ հատույթի ներքին տարրերի տվյալները

Swpp	S, Mises, σ_i	PEEQ, ε_i	PE11, ε_r	PE22, ε_z	PE33, ε_θ	PE12, γ_{rz}	VVF, v
1	2.51E+08	4.23E-03	1.89E-03	-4.74E-03	1.66E-03	-9.38E-04	1.59E-01
2	2.63E+08	4.30E-03	2.16E-03	-4.82E-03	1.86E-03	-1.34E-03	1.60E-01
3	2.76E+08	5.12E-03	3.22E-03	-5.64E-03	2.09E-03	-1.43E-03	1.60E-01
4	2.66E+08	3.06E-03	1.64E-03	-2.97E-03	1.97E-03	-1.28E-03	1.60E-01
5	2.53E+08	1.05E-02	4.04E-03	-2.18E-03	2.42E-03	-1.62E-02	1.63E-01
6	2.98E+08	1.96E-02	3.73E-03	-3.77E-04	2.62E-03	-3.45E-02	1.65E-01


Նկ. 7 և 8 – ում բերված են e-e և Դ-ճ հատույթների վերնի տարրերի դեֆորմացիաների բաղադրիչների գրաֆիկները, իսկ նկ. 9 – ում՝ դրանց հանգույցների տվյալներով կառուցված ծակոտկենության փոփոխության գրաֆիկները:



Նկ. 7. e-e հատույթի վերնի տարրերի տվյալներով կառուցված դեֆորմացիաների բաղադրիչների գրաֆիկները
(1 - սահքի, 2 - շառավղային, 3 - շրջանային և 4 - առանցքային)



Նկ. 8. ռ-ռ հատույթի վերնի տարրերի տվյալներով կառուցված դեֆորմացիաների բաղադրիչների գրաֆիկները
(1 - սահքի, 2 - շառավղային, 3 - շրջանային և 4 - առանցքային)



Նկ. 9. e-e (1) և և-և (2) հատույթների հանգույցների տվյալներով կառուցված ծակոտկենության փոփոխության գրաֆիկները

Եզրակացություն.

1. Կատարվել են եռակալված նյութից գլանական աստիճանաձև ձողի արտադրման գործընթացի սկզբնական չկայունացված ժամանակաշրջանի դեֆորմացիոն վիճակի ABAQUS ԱՕՄ-ում մոդելավորումը՝ բացարձակ կոշտ մամլամատին հաղորդելով 3 մ/վողղահայաց տեղափոխություն, և ստացված տվյալների վերլուծում ու արդյունքերի համեմատում ՅBM EC 1022-ի վրա ՓՕՐՏՐԱԿ-IV ալգորիթմական լեզվով կազմված ծրագրով հաշվարկված տվյալների հետ:

2. Հետազոտվել են մամլամայրում ձողի e-e և և-և հանգույցների, դրանցից վերևի և ներքևի տարրերի աղյուսակային տվյալները (Միզեսի լարման, դեֆորմացիաների ինտենսիվության և բաղադրիչների, ինչպես նաև նյութի ծակոտկենության արժեքները), որոնցից ընտրվել են գործընթացը բնութագրող մեծությունները, և կառուցվել են դրանց գրաֆիկները (դեֆորմացիաների բաղադրիչների և ծակոտկենության փոփոխության):

3. Բոլոր դեֆորմացիաների բաղադրիչները ծայրագույն արժեքներին հասնում են կոնական մամլամայրի հետ ձողի հպակային գոտիներում: Դրանցից ամենամեծերը e-e-ի գոտում սահքի (0,247) և առանցքային սեղմող դեֆորմացիաներն (-0,19) են, որոնց պատճառով նյութի ծակոտկենությունը 16%-ից փոքրանում է 8,3%-ի (նկ. 9), իսկ շառավղային և շրջանային դեֆորմացիաները դրական են ու փոքր և ձողի առանցքից հաշված՝ առաջին հինգ տարրերում շատ մոտ են մեկը

մյուսին: $d-d$ – ի գոտում ամենամեծը առանցքային ձգող դեֆորմացիան է (0,08), իսկ մյուսները բացասական են:

4. ԱՕՄ–ում մոդելավորմամբ ստացվել են տվյալներ տեխնոլոգիական գործընթացի ամենակարևոր հպակային գոտու՝ վեցերորդ տարրի համար, ինչպես նաև ցույց է տրվել, որ, ի տարբերություն [6] – ի, $d-d$ – ի գոտում ամրանավորած մենուղղորդված թելիկների համար վտանգավոր սահքի դեֆորմացիաները $e-e$ -ի համեմատ շատ փոքր են և փոխել են իրենց նշանը: Ինչ վերաբերում է ԱՕՄ–ում ստացված մյուս արդյունքներին, ապա դրանք որակապես համընկնում են ЭВМ ЕС 1022–ի վրա ФОРТРАН–IV ալգորիթմական լեզվով կազմված ծրագրով հաշվարկված տվյալներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Petrosyan G.L., Verlinski S.V., Hakobyan N.G., Margaryan M.A.** Investigation of wide stripe pure bending plastic deformation in freely supported and restrained beam schemes// AIP Conference Proceedings 2166, 020014 (2019); <https://doi.org/10.1063/1.5131601> Published Online: 25 October 2019.- P.1-7.
2. **Маргарян М.А.** Компьютерное моделирование процесса прессования круглого спеченного образца в конических матрицах // Известия НАН РА. Механика. – 2020. - Т. 73, №3. - С. 44-53.
3. **Петросян Г.Л., Давтян А.А.** Исследование напряженно-деформированного состояния процессов волочения спеченных образцов прямоугольного сечения в клиновидных матрицах различных наклонов комбинированным методом // Международный сборник научных трудов ДонНТУ: Прогрессивные технологии и системы машиностроения.- Донецк, 2021.- №4 (75).- С. 69-79.
4. **Петросян Г.Л.** Пластическое деформирование порошковых материалов.- М.: Металлургия, 1988.- 153 с.
5. **Петросян Г.Л., Нерсисян Г.Г., Малхасян С.А., Петросян А.С.** Уплотнение пористых материалов в жестких конических и цилиндрических матрицах // Порошковая металлургия. - 1982. - №5. - С. 22-27.
6. **Манукян Н.В., Петросян Г.Л., Галоян Г.В., Петросян А.С.** О прочности композиционных материалов, армированных однонаправленными волокнами // Межвузовский тематический сборник научных трудов по ПМ: Теория и практика ПМ.- Ереван, 1982.- С. 71-78.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 23.12.2021:

Г.Л. ПЕТРОСЯН, А.С. ПЕТРОСЯН, М.А. МАРГАРЯН, А.А. БАБАЯН

**КОМПЬЮТЕРНОЕ МОДЕЛИРОВАНИЕ ДЕФОРМИРОВАННОГО
СОСТОЯНИЯ ПРОЦЕССА ЭКСТРУЗИИ СТУПЕНЧАТОГО СПЕЧЕННОГО
КРУГЛОГО СТЕРЖНЯ**

Проведено моделирование случая начального периода неустойчивого процесса экструзии ступенчатого спеченного образца круглого сечения в автоматизированной программной среде ABAQUS. В верхней части цилиндрического образца дано равномерное перемещение в вертикальном направлении, по причине чего он деформируется. Получены зоны распределения напряжения Мизеса, интенсивности деформаций, компонентов деформированного состояния и пористости материала. Найдены данные по семи узлам при входе (е-е) и выходе (д-д) из матрицы, а также по шести элементам сверху и снизу от них, которые представлены в виде таблицы. Все значения деформаций достигают максимума в зонах контакта матрицы со стержнем.

Полученные данные дали возможность построить графики зависимостей компонентов деформированного состояния верхних элементов сечений е-е и д-д и пористости в узлах этих сечений. Самые большие из этих в зоне е-е - осевые деформации сжатия и деформации сдвига. В зоне д-д деформации сдвига, по сравнению с е-е, очень малы и поменяли свой знак. Остальные данные качественно совпадают с расчетными данными программы, составленной с помощью алгоритмического языка ФОРТРАН – IV на ЭВМ ЕС 1022.

Ключевые слова: спеченный материал, пористость, экструзия, деформированное состояние, компьютерное моделирование.

G.L. PETROSYAN, H.S. PETROSYAN, M.A. MARGARYAN, A.A. BABAYAN

**COMPUTER MODELING OF THE DEFORMED STATE OF THE
STEPPED SINTERED BAR EXTRUSION**

The case of an unstable period at the initial stage of extrusion of a stepped sintered sample with a circular cross-section was simulated in the ABAQUS software environment. From the top of the cylindrical sample, uniform movement in the vertical direction is given, because of which it was deformed. Zones of von Mises stress, strain intensity, components of the deformation state and porosity of the material are obtained. The data were found for seven nodes at the entrance (e-e) and exit (d-d) from the matrix, as well as for six elements above and below them, which are presented in the form of a table. All values of deformations reach a maximum in the zones of contact between the matrix and the bar.

The data obtained made it possible to plot the graphs of the components of the deformation state of the upper elements of the sections e-e and д-д and changes in porosity at the nodes of these sections. The largest of these in the e-e zone are axial deformations compression and shift deformations. In the zone д-д, shift deformations are very small compared to e-e and have changed their sign. The rest of the data qualitatively coincide with the calculated data of the program compiled in the algorithmic language FORTRAN-IV on the ЭС 1022 computer.

Keywords: sintered material, porosity, extrusion, deformed state, computer simulation.

**ՄԵՏԱՂԱՊԱՏՎԱԾ ԱԼՄԱՍՏՍՅՈՒՆ ՀԱՏԻԿՆԵՐՈՎ ԿՈՄՊՈԶԻՏՍՅՈՒՆ
ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՏԱՔ ՄԱՍԼՄԱՄԲ**

Մշակվել է տիտանով մետաղապատված HSD90 (AC200) մակնիշի ալմաստային հատիկներով և $34\%Fe+6\%Ni+32\%Cu+8\%Sn+10\%WC+10\%C+18$ մակնիշի գորշ թուջի տաշեղի՝ փոշի բաղադրությամբ կապակցանյութով քարամշակման գործիքների պատրաստման նոր տեխնոլոգիա, որը ներառում է կապակցանյութի և տիտանով մետաղապատված HSD90 (AC200) մակնիշի ալմաստային հատիկներով մետաղաալմաստային կոմպոզիտային բովախառնուրդի պատրաստում, սառը մամլում, եռակալում, տաք մամլում և մեխանիկական մշակում գործընթացները: Ընտրվել և հիմնավորվել են եռակալման և տաք մամլման լավարկված ռեժիմները. եռակալման ջերմաստիճանը՝ $800\pm 20^{\circ}C$, պահման տևողությունը՝ $0,75\ldots 1,0$ ժամ, տաք մամլման ջերմաստիճանը՝ $850\pm 10^{\circ}C$, պահման տևողությունը՝ $25\ldots 30$ րոպե, տեսակարար ճնշումը՝ $80\ldots 100$ ՄՊա, որոնց դեպքում կոմպոզիտի կարծրությունը կազմում է $60\ldots 102$ HRB, հարվածային մածուցիկությունը՝ KCU $2\ldots 36$ կՋ/սմ², խզման ամրությունը՝ $23\ldots 160$ ՄՊա:

Ցույց է տրված, որ կոմպոզիտային նյութն ունի հետերոգեն կառուցվածք. մայրակը ներկայացնում է հիմնականում α (անագի պինդ լուծույթը պղնձում՝ $13,5\%$ անագի պարունակությամբ) և δ ֆազերի (Cu_3Sn) խառնուրդ, որում հավասարաչափ բաշխված են α -երկաթի և նիկելի պինդ լուծույթները և ինտերմետաղական ֆազերն անագի և պղնձի հետ, իսկ լցանյութերը՝ գրաֆիտի և վոլֆրամի կարբիդի հատիկները, երևում են առանձին հատիկների տեսքով: Միաժամանակ, գորշ թուջի առկայությունը կոմպոզիտում հանգեցնում է ազատ գրաֆիտի առաջացմանը, որը նպաստում է կոմպոզիտի հակաշփական հատկությունների լավացմանը:

Առանցքային բառեր. մետաղապատված ալմաստային հատիկներ, կապակցանյութ, բովախառնուրդ, սառը մամլում, եռակալում, տաք մամլում, մետաղաալմաստային կոմպոզիտային նյութ, կառուցվածքագոյացում, մաշակայունություն:

Ներածություն. Մետաղների և ոչ մետաղական նյութերի մշակման բազմաթիվ տեխնոլոգիական գործընթացներում լայն կիրառություն են գտել ալմաստային գործիքները [1, 2], առանց որոնց հնարավոր չէ իրականացնել հատուկ մեքենաշինության մեջ կատարվող հղկման, ինչպես նաև ընդերքի շահագործման և քարամշակման արտադրությունում իրականացվող աշխատանքները:

Ալմաստամետաղական գործիքների հիմնական թերությունն ալմաստային հատիկների ոչ արդյունավետ օգտագործումն է: Ալմաստը, լինելով չեզոք նյութ, մետաղաալմաստային կոպոզիտում պահվում է միայն մեխանիկական կապի միջոցով: Մինչդեռ ալմաստային հատիկների արդյունավետ օգտագործման համար դա բավարար չէ: Նշվածը բացառելու նպատակով ալմաստային հատիկները նախօրոք պետք է ենթարկվեն մետաղապատման, որը հնարավորություն կտա՝ ստեղծելու ամուր կապ ալմաստային հատիկների և կապակցանյութի միջև [3-7]: Միաժամանակ, ինքնասրման ռեժիմով ալմաստային գործիքի արդյունավետ աշխատանքի համար մետաղական կապակցանյութը պետք է ունենա լավարկված մաշակայունություն, որը կապահովի ալմաստային հատիկների կտրող եզրերի անընդհատ նորացումը: Եթե կապակցանյութի մաշակայունությունը փոքր լինի պահանջվող արժեքից, ապա գործիքում ալմաստահատիկները ոչ արդյունավետ կօգտագործվեն, մինչդեռ բարձրի դեպքում ալմաստահատիկների գազաթները կմաշվեն, իսկ կապակցանյութը՝ ոչ: Արդյունքում՝ կտրող եզրերի բացակայության պատճառով կառաջանան հարթակներ, և շփման ուժը մեծանալով՝ կնպաստի ալմաստամետաղական կոմպոզիտի քայքայմանը: Ալմաստային գործիքի ինքնասրվող հատկությունը կախված է կապակցանյութի ֆիզիկամեխանիկական հատկություններից և մշակվող նյութի հատիկայնությունից: Որքան արագ է մաշվում կապակցանյութը, այդքան լավ է ընթանում ինքնասրման գործընթացը: Մյուս կողմից՝ պետք է խուսափել ալմաստային հատիկների ինտենսիվ պոկումից, իսկ մաշման աստիճանը պետք է ունենա որոշակի սահման: Կապակցանյութը պետք է ունենա նաև բավարար ջերմակայունություն, ջերմափոխանակություն, նվազագույն շփման գործակից և քիմիապես չփոխազդի մշակվող նյութի հետ:

Նշված խնդիրը խիստ արդիական է և կարելի է լուծել նոր կապակցանյութերի մշակման, ալմաստային հատիկների նախօրոք մետաղապատման, դրանցից նոր կոմպոզիտային նյութերի ստացման և ալմաստամետաղական գործիքների պատրաստման տեխնոլոգիաների մշակմամբ:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը. Ելնելով վերը նշվածից՝ աշխատանքի նպատակն է ջերմադիֆուզիոն եղանակով տիտանով մետաղապատված HSD90 (AC200) մակնիշի ալմաստային հատիկների համար նոր մաշակայուն կապակցանյութի մշակումը և տաք մամլմամբ մետաղաալմաստային կոմպոզիտային հղկագործիքների պատրաստման տեխնոլոգիայի մշակումը, ինչպես նաև դրանց կառուցվածքի ու հատկությունների ձևավորման գործընթացների հետազոտումը:

Նշված խնդիրը հնարավոր է լուծել փոշեմետալուրգիական եղանակով, որը հնարավորություն է տալիս նախօրոք պատրաստված ալմաստամետաղական կոմպոզիտային բովախառնուրդից սառը մամլմամբ ստանալ ծակոտկեն մամլվածքներ, դրանք հեղուկ ֆազային միջավայրում ենթարկել եռակալման, այնու-

հետև տաք մամլման միջոցով գործնականում ստանալ անծակոտկեն կառուցվածքով գործիքներ՝ օժտված կտրման բարձր հատկություններով:

Ալմաստային հատիկների ջերմադիֆուզիոն մետաղապատման շնորհիվ՝ «ալմաստ-մետաղածածկույթ-կապակցանյութ» անցումային շերտերում տեղի են ունենում դիֆուզիոն գործընթացներ, որոնց արդյունքում առաջանում է քիմիական կապ՝ մեծացնելով ալմաստի հատիկների պահման ամրությունը: Ծածկութապատող մետաղը փոխազդում է ալմաստային հատիկների հետ և առաջացնում կարբիդներ: Դրանք լցվում են ալմաստային հատիկում գոյություն ունեցող միկրոճաքերի մեջ և մեծացնում ալմաստային հատիկի ամրությունը [8, 9]:


Հետազոտության արդյունքները. Համալիր փորձագիտական հետազոտությունների արդյունքում տիտանով մետաղապատված HSD90 (AC200) մակնիշի ալմաստային հատիկների ([C]*) համար ընտրվել և հիմնավորվել է կապակցանյութի քիմիական կազմը՝ 32% Cu+8% Sn+6% Ni+34% Fe+10% WC+10% C₄H₁₈, որը ներկայացնում է պղնձի և անագի փոշիների խառնուրդ՝ 4:1 հարաբերությամբ, իսկ որպես լեգիրող տարրեր ընտրվել են երկաթը և նիկելը, որպես լցանյութ՝ վոլֆրամի կարբիդը, որպես պինդ քսանյութ՝ C₄H₁₈ մակնիշի գորշ թուջի տաշեղի փոշին [10]: Ալմաստամետաղական կոմպոզիտում ալմաստի կոնցենտրացիան վերցրվել է 50%:

Ռենտգենասպեկտրային վերլուծության մեթոդով ուսումնասիրվել է ծածկույթի փոխազդեցությունը կապակցանյութի բաղադրամասերի հետ: Բացահայտվել է, որ «ծածկույթ-կապակցանյութ» ֆազերի սահմանում տեղի է ունենում ծածկույթ մետաղի (Ti) և կապակցանյութի (Cu-Sn) փոխադարձ դիֆուզիա, որի արդյունքում ապահովվում է սահմանային ֆազերի ամուր կապը:

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ալմաստամետաղական կոմպոզիտի կարծրությունը, հարվածային մածուցիկությունը և կտրման ամրությունը կախված են մի շարք գործոններից, մասնավորապես՝ ալմաստամետաղական կոմպոզիտի բաղադրությունից, սառը մամլման ճնշումից, եռակալման ջերմաստիճանից, այդ ջերմաստիճանում պահման տևողությունից և տաք մամլման ճնշումից: Բացահայտվել է, որ սառը մամլման տեսակարար ճնշումը 300 ՄՊա-ից ավելի բարձրացնելու դեպքում տեղի է ունենում մետաղապատված ալմաստի հատիկների ջարդում, ուստի այն ընտրվել է 200...250 ՄՊա, որի դեպքում ծակոտկենությունը ստացվում է՝ $\theta=20...25\%$:

Սառը մամլված բրիկետները ենթարկվել են եռակալման և տաք մամլման, արդյունքում մամլվածքները ձեռք են բերում պահանջվող կառուցվածք ու հատկություններ: Հատկապես կարևոր ազդեցություն ունի եռակալման ջերմաստիճանը, որի դեպքում նյութում տեղի են ունենում դիֆուզիոն գործընթացներ և նոր ֆազերի առաջացում: Cu-Sn հիմքով կապակցանյութերի եռակալումն ընթանում է հեղուկ ֆազում, իսկ եռակալման ջերմաստիճանը 650...800°C տիրույթում է: Եռա-

կալման ջերմաստիճանի ճիշտ ընտրության համար կատարվել են ջերմաձանրաչափական հետազոտություններ, որոնց արդյունքում այն ընտրվել է $800 \pm 20^\circ\text{C}$: Նշված ջերմաստիճանում ալմաստային հատիկների գրաֆիտացման գործընթաց գործնականում տեղի չի ունենում: Այդ է վկայում զանգվածի փոփոխության գրաֆիկը (TG) արգոնի միջավայրում տաքացնելիս, ինչպես նաև DTA կորի վրա էնդոթերմիկ կամ էկզոթերմիկ ռեակցիաների բացակայությունը (նկ. 1):




Նկ. 1. $[C]^*$ -կապակցանյութ ալմաստամետաղական կոմպոզիտային նյութի դերիվատագիրը՝ տաքացված օդի (ա) և արգոնի միջավայրերում (բ)

Ալմաստամետաղական կոմպոզիտային նյութի կառուցվածքագոյացումն ավարտվում է տաք մամլման ընթացքում, որի վրա ազդող պարամետրներն են մամլվածքի բաղադրությունը, տաքացման ջերմաստիճանը և տևողությունը, դեֆորմացման աստիճանը, ալմաստի հարաբերական կոնցենտրացիան և նրա հատիկայնությունը, ինչպես նաև մամլվածքի սկզբնական ծակոտկենությունը:

Ջերմաստիճանի ներքին սահմանն ընտրվել է 800°C , ինչը պայմանավորված է տաք մամլման ճնշման (P_0) մեծացմամբ և ալմաստային հատիկների ջարդմամբ: Բարձր ջերմաստիճաններում մեծանում է կապակցանյութի պլաստիկությունը, և հնարավորություն է ստեղծվում խուսափելու ալմաստային հատիկների ջարդումից: Տաք մամլման ջերմաստիճանում պահման տևողությունը վերցվել է $0,75 \dots 1,0$ ժամ, ինչը բավարար է ալմաստային հատիկների մետաղապատված շերտի և կապակցանյութի միջև դիֆուզիայի ընթացքի ու կառուցվածքագոյացման գործընթացների համար: Ուսումնասիրվել է տաք մամլման ճնշման կախվածությունը դեֆորմացիայի աստիճանից և ալմաստի կոնցենտրացիայից (նկ. 2), համաձայն որի դեֆորմացիայի աստիճանի (ε) մեծացումով տաք մամլման ճնշումն ($P_{\text{մմ}}$) աճում է, իսկ ծակոտկենությունը (θ)՝ նվազում: Մամլման ճնշումն աճում է նաև ալմաստի կոնցենտրացիայի (K) աճին զուգընթաց: Հետազոտությունների արդյունքում ընտր-

վել են տաք մամլման պարամետրերը՝ $T=850\pm 10^{\circ}C$, $\tau=0,5$ ժամ, մամլվածքի սկզբնական ծակոտկենությունը 20%, տաք մամլման ճնշման լավարկված արժեքը՝ $P_{տաք}=80\ldots 100$ ՄՊա, որոնց դեպքում կոմպոզիտի կարծրությունը կազմում է 60...102 HRB, հարվածային մածուցիկությունը՝ KCU 2...36 կՋ/սմ², խզման ամրությունը՝ 23...160 ՄՊա:




Նկ. 2. Տաք մամլման $P_{տաք}$ ճնշման կախվածությունը դեֆորմացիայի աստիճանից (ϵ) և $[C]^*$ -ի կոնցենտրացիայից (K). 1- $K=50\%$, 2- $K=100\%$, 3- $K=150\%$, 4- $K=200\%$ (կետագծերով գծեր տարվել է 1-4 կորերի ամենացածր կետերով)

Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ կապակցանյութում C418 մակնիշի գորշ թուջի ավելացումը փոքրացնում է հարվածային մածուցիկությունը, որոշ չափով իջեցնում է կարծրությունը և կտրման ամրությունը: Ընդ որում, որքան փոքր է լցանյութի հատիկայնությունը, այնքան այն էականորեն է ազդում մեխանիկական հատկությունների վրա՝ ապահովելով գործիքի կապակցանյութի ինքնասրման պայմանը: Վուֆրամի կարբիդի ներմուծումը նպաստում է հարվածային մածուցիկության իջեցմանը և կարծրության բարձրացմանը, իսկ նիկելը և երկաթը նպաստում են կոմպոզիտի կարծրության, ամրության և մաշակայունության բարձրացմանը: Մետաղազիտական վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ մշակված ալմաստամետաղական կոմպոզիտային նյութն ունի հետերոգեն կառուցվածք. մայրակը ներկայացնում է α (անագի պինդ լուծույթը պղնձում՝ 13,5% անագի պարունակությամբ) և δ ֆազերի ($Cu_{31}Sn_8$) խառնուրդ, որում հավասարաչափ բաշխված են α -երկաթի և նիկելի պինդ լուծույթներն ու անագի և պղնձի ինտերմետաղական ֆազերը, իսկ լցանյութերը՝ գրաֆիտի և վուֆրամի կարբիդի հատիկները, երևում են առանձին հատիկների տեսքով: Գորշ թուջի առ-

կայությունը կոմպոզիտում, շնորհիվ ազատ գրաֆիտի, նպաստում է հակաշփական հատկությունների լավացմանը:

Ուսումնասիրվել է տիտանով մետաղապատված HSD90 (AC200) մակնիշի ալմաստային հատիկների ծածկույթի փոխազդեցությունը մետաղական կապակցանյութի բաղադրամասերի հետ (նկ. 3): Բացահայտվել է, որ «ծածկույթ-կապակցանյութ» ֆազերի սահմանում տեղի ունի ծածկույթի մետաղի (Ti) և կապակցանյութի փոխադարձ դիֆուզիա, որն ապահովում է սահմանային ֆազերի ամուր կապը: Ցույց է տրված, որ տարրերի բաշխվածությունը կատարվում է ծածկույթի ամբողջ մակերևույթով:




Նկ. 3. Տիտանե ծածկույթի փոխազդեցությունը մետաղական կապակցանյութի բաղադրիչների հետ. ա- HSD90 (AC200) մակնիշի ալմաստե հատիկի ($[C]^*$) և կապակցանյութի բաշխումը, բ- C-ի բաշխումը, գ- Ti-ի բաշխումը, դ- Cu-ի բաշխումը, ե- Ni-ի բաշխումը, զ- Fe-ի բաշխումը, է- Sn-ի բաշխումը, ը- Ti-ի, Cu-ի և C-ի սկանագիրը

Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ եռակալված նմուշների սեղմման ամրությունը կտրուկ աճում է տաք մամլման ճնշման մեծացմանը զուգընթաց: Սակայն ալմաստամետաղական նմուշների պատրաստման տեխնոլոգիական ռեժիմների մնացած հավասար պայմանների դեպքում դրանց ամրության ցուցանիշները նվազում են ալմաստափոշու հարաբերական կոնցենտրացիան 25%-ից 100% բարձրացնելու դեպքում, որը բացատրվում է կապակցանյութի մետաղական բաղադրիչ տարրերի քիմիական կապի ավելի մեծ էներգիայով: Այդ է պատճառը, որ նմուշների մեջ ալմաստային փոշու կոնցենտրացիան ավելաց-

նելիս ալմաստամետաղական կոմպոզիտային նյութի կապի էներգիան նվազում է, և նրա քայքայումը տեղի է ունենում ավելի փոքր բեռնվածքների դեպքում:

Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակվել է տիտանով մետաղապատված HSD90 (AC200) մակնիշի ալմաստային հատիկներով և $34\% \text{ Fe} + 6\% \text{ Ni} + 32\% \text{ Cu} + 8\% \text{ Sn} + 10\% \text{ WC} + 10\% \text{ C} + 18\%$ մակնիշի գորշ թուջի տաշեղի՝ փոշի բաղադրությամբ կապակցանյութով քարամշակման գործիքների պատրաստման նոր տեխնոլոգիա (նկ. 4), որը հնարավորություն է տալիս՝ ապահովելու առավելագույն արտադրողականություն:



Նկ. 4. Քարամշակման համար ալմաստամետաղական HSD90 (AC200) մակնիշի ալմաստային հատիկներով մետաղապատված ալմաստային նոր կոմպոզիտային նյութերի ստացման տեխնոլոգիական սխեման

Համաձայն մշակված տեխնոլոգիայի՝ ալմաստային փոշիները նախօրոք ենթարկվել են տիտանով մետաղապատման հալոգենային միջավայրում, իսկ գորշ թուջի փոշին ստացվել է թուջի մեխանիկական մշակումից ստացված տաշեղների


մանրացմամբ: Պատրաստվել է կապակցանյութ 34% Fe+6% Ni+32% Cu+8% Sn+ +10% WC+10% C₄18 մակնիշի գորշ թուջի տաշեղի փոշի բաղադրությամբ, ընդ որում, հավասարաչափ խառնում ապահովելու համար ավելացվել է ~1% տեխնիկական սպիրտ, իսկ խառնումը կատարվել է 7...8 ժամ:

Ալմաստամետաղական բովախառնուրդի հավասարաչափ խառնումն ապահովելու համար նրա մեջ ավելացվել է գլիցերինի 20%-ոց սպիրտային լուծույթ 1,5...2,0% քանակությամբ (ըստ զանգվածի): Խառնումն իրականացվել է 8...10 ժամ: Ստացված բովախառնուրդը կշռվել է ըստ պահանջվող զանգվածի և ենթարկվել սառը մամլման, որն իրականացվել է քանդվող մամլաձևի մեջ: Սկզբից մամլաձևի խոռոչի մեջ լցվել է ալմաստ չպարունակող շերտի բովախառնուրդը և հատուկ մամլամատով հարթեցվել, ապա լցվել է ալմաստ պարունակող բովախառնուրդը, հարթեցվել, ու կատարվել է մամլում: Մամլաձևի մասերի հաշվարկը կատարվել է այն նկատառումից ելնելով, որ ստացված մամլվածքի ծակոտկենությունը չգերազանցի 20...25%:

Կառուցվածքագոյացման նպատակով բրիկետները շարվել են տաք մամլման մամլաձևի մեջ, այնուհետև մամլվածքները մամլակաղապարի հետ միասին ենթարկվել են եռակալման՝ պաշտպանիչ միջավայրում: Եռակալման ժամանակ գլիցերինը ցնդում է և հեռանում, ինչպես նաև որոշակի չափով տեղի է ունենում մետաղափոշիների վերականգնում: $T_{\text{եռ}}=800\pm 20^{\circ}\text{C}$ -ում $\tau_{\text{եռ}}=0,75...1,0$ ժամ պաշտպանիչ միջավայրում եռակալումից հետո մամլաձևը եռակալված սեգմենտների հետ միասին 30 րոպե ընդհանուր տևողությամբ տաքացվել և պահվել է $850\pm 10^{\circ}\text{C}$, որից հետո այն դրվել է մամլիչի տակ, և կատարվել տաք մամլում, մինչև որ մամլամատերի վերին հարթությունը հավասարվի մամլաձևի վերին հարթությանը: Այս դիրքով մամլաձևը պահվել է 2...3 րոպե, ապա տեղափոխվել հովացման: Սառը մամլաձևը քանդվել է, իսկ սեգմենտների ալմաստ չպարունակող մակերևույթը ենթարկվել հղկման:

Մշակված կապակցանյութով պատրաստվել են ալմաստային մատային ֆրեզներ (նկ. 5ա)՝ թվածրագրային կառավարվող (θ ՄԿ) ֆրեզային հաստոցի վրա տարբեր կարծրություններով բնական քարերի մշակման համար: Գրանիտի ֆրեզման ժամանակ առավելագույն արդյունավետությամբ առանձնացել են կարծրության միջին ցուցանիշով ֆրեզները՝ HRB ~ 80 միավոր, իսկ HRB ~ 100 միավոր կարծրությամբ ֆրեզներն իրենց արտադրողականությամբ 1,5 անգամ զիջում են դրանց: Միաժամանակ՝ վերջիններս ավելի արդյունավետ են բազալտի մշակման ժամանակ: Ալմաստային մատային ֆրեզներով բնական քարերի ֆրեզման ժամանակ բազահայտվել է, որ մետաղապատված ալմաստահատիկները նույնիսկ ջարդվելով մնում են կապակցանյութի մեջ ամուր ամրացված և շարունակում մասնակցել կտրման գործընթացին (նկ. 5բ, գ):

Ալմաստամետաղական կոմպոզիտներից պատրաստված գործիքների համար իրականացվել են երկփուլանի փորձարկումներ: Նախնական փորձարկումների համար օգտագործվել են 500 մմ տրամագծով, իսկ վերջնական փորձարկումների համար՝ 1200 մմ տրամագծով սկավառակային սղոցներ: Որպես մշակվող նյութ օգտագործվել է բազալտը: Փորձարկումների արդյունքում որոշվել են գործիքների տեսակարար մաշվածքի չափերը և ալմաստի տեսակարար ծախսը: Իրականացվել է ալմաստամետաղական սեգմենտների աշխատանքային մակերևույթների ուսումնասիրում: Պարզվել է, որ ընկած ալմաստային հատիկների թիվը կազմել է մնացած հատիկների 8...10%-ը: Շատ հատիկներ կապակցանյութից դուրս են եկել իրենց չափի 50...60%-ով, որը փաստում է կապակցանյութով ալմաստի հատիկն ամուր պահելու ունակության մասին:



Նկ. 5. Ալմաստային ֆրեզներ (ա) և դրանց աշխատանքային մակերևույթը քարամշակումից հետո՝ բ) x40, գ) x180

Մշակված տեխնոլոգիայով պատրաստված գործիքների փորձարկումները ցույց են տալիս, որ դրանք ապահովում են բարձր արտադրողականություն, հատկապես կարծր քարերի մշակման ժամանակ, և շնորհիվ ալմաստի հատիկների ժամանակին բացվելուն՝ կտրման ողջ գործընթացի ժամանակ այս գործիքները չեն կորցնում իրենց կտրող հատկությունները:

Եզրակացություն. Մշակվել է տիտանով մետաղապատված HSD90 (AC200) մակնիշի ալմաստային հատիկներով և 34% Fe+6% Ni+32% Cu+8% Sn+10% WC+10% C+18 մակնիշի գորշ թուջի տաշեղի՝ փոշի բաղադրությամբ կապակցանյութով քարամշակման գործիքների պատրաստման նոր տեխնոլոգիա: Նշված տեխնոլոգիայով ալմաստամետաղական կոմպոզիտային նյութերից պատրաստված գործիքներն ունեն բարձր արտադրողականություն՝ շնորհիվ տիտանով մետաղապատված ալմաստային հատիկների օգտագործման և կոմպոզիտի մեջ վոլֆրամի կարբիդի ու գորշ թուջի 8...12% ավելացման: Դա նպաստում է արտադրողականության առավելագույն արժեքի ստացմանը:

Հետազոտությունները կատարվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ № 18T-2F096 գիտական ծրագրի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Сидоренко Д.А.** Усовершенствование технологии получения алмазных отрезных сегментных кругов и сверл путем наномодифицирования связок на основе меди и железа: Автореф. дис. ... канд. техн. наук: 05.16.06.- М., 2012.- 18 с.
2. **Бойцов А.Г., Дудаков В.Б., Шкарупа М.И.** Металлообработка, Металлургия // Специализированный журнал РИТМ.- 2014.- №9.- С. 5-8.
3. **Агбалян А.С., Ордян Н.А., Мартиросян А.М., Погосян Х.В.** Новая технология изготовления алмазных инструментов на металлических связках // Вестник НПУА: Металлургия, материаловедение, недропользование.- Ереван, 2017.- № 1.- С. 16-25.
4. Разработка технологии изготовления высокопроизводительных алмазных инструментов на металлической связке методом жидкофазного спекания / **А.М. Мартиросян, С.Г. Агбалян, Н.А. Ордян, А.С. Агбалян, Х.В. Погосян** // Сб. тез. докл. II Межд. конф. молодых ученых, работающих в области углеродных материалов.- М., 2019.- С. 187-190.
5. Քարամշակման արտադրությունում օգտագործվող պլմաստամետաղական կոմպոզիտային նյութերի ստացման տեխնոլոգիաները և առանձնահատկությունները / **Ս.Գ. Աղբալյան, Ն.Ա. Օրդյան, Ա.Մ. Մարտիրոսյան, Ա.Ս. Աղբալյան, Խ.Վ. Պողոսյան** // Հաշվատանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Լրաբեր. Գիտական հոդվածների ժողովածու.- Երևան, 2019.- Մաս 2.- էջ 508-522:
6. Изучение возможностей оптимизации технологии изготовления алмазных инструментов на металлической связке / **А.И. Саградян, С.Г. Агбалян, А.М. Мартиросян, Н.А. Ордян, Х.В. Погосян** // Научно-технический сборник “Різання та інструменти в технологічних системах”.- Харьковский Национальный технический университет (ХПИ).- Харьков, 2020.- Вып. 92.- С. 136-143.
7. Исследование механизма структурообразования в переходном слое металлоалмазных композиционных материалов с металлизированными алмазными зёрнами, полученных жидкофазным свободным спеканием / **С.Г. Агбалян, Н.А. Ордян, А.М. Мартиросян, А.С. Агбалян, Х.В. Погосян** // Вестник НПУА: Металлургия, материаловедение, недропользование.- Ереван, 2020.- № 1.- С. 39-51.
8. **Оганян А.П.** Разработка технологии металлизации алмазных порошков термодиффузионным насыщением: Автореф. дис. ... канд. техн. наук.- Л., 1987.- 16с.
9. **Казарян А.Н.** Технология нанесения металлических покрытий на алмазные порошки методом газотранспортных реакций: Автореф. дис. ... канд. техн. наук.- Ереван, 1990.- 17с.
10. Разработка связки для изготовления алмазнометаллического инструмента методом свободного спекания / **А.М. Мартиросян, А.С. Агбалян, Н.А. Ордян, А.С. Агбалян, Х.В. Погосян** // Сб. тез. докл. 12-й Межд. конф. “Углерод: фундаментальные проблемы науки, материаловедение, технология”.- М., Троицк, 2020.- С. 107-110.

Հաշվատանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 06.12.2021:

**С.Г. АГБАЛЯН, Н.А. ОРДЯН, А.М. МАРТИРОСЯН, А.С. АГБАЛЯН,
Х.В. ПОГОСЯН**

РАЗРАБОТКА ТЕХНОЛОГИИ ПОЛУЧЕНИЯ КОМПОЗИЦИОННЫХ МАТЕРИАЛОВ ГОРЯЧИМ ПРЕССОВАНИЕМ С МЕТАЛЛИЗИРОВАННЫМИ АЛМАЗНЫМИ ЗЕРНАМИ

Разработана новая технология изготовления алмазных инструментов на связке состава 34% Fe+6% Ni+32% Cu+8% Sn+10% WC+10% Cч18 и с металлизированными титаном алмазными зернами марки HSD90 (AC200), включающая процессы изготовления композиционной шихты, холодное прессование, спекание, горячее прессование и механическую обработку. Выбраны и обоснованы оптимальные режимы спекания и горячего прессования: температура спекания - $800 \pm 20^\circ\text{C}$, время выдержки - 0,75...1,0 час; температура горячего прессования - $850 \pm 10^\circ\text{C}$, время выдержки - 25...30 мин, удельное давление - 80...100 МПа. В этом случае твердость композита составляет 60...102 HRB, ударная вязкость KCU - 2...36 кДж/м², прочность на срез - 23...160 МПа.

Показано, что композиционный материал имеет гетерогенную структуру: матрица представляет собой в основном смесь α (твердый раствор олова в меди – с 13,5%-ым содержанием олова) и δ фаз ($\text{Cu}_{31}\text{Sn}_8$), в которой равномерно распределены твердые растворы α железа и никеля, а также интерметаллидные фазы с оловом и медью, а наполнители – зерна графита и карбида вольфрама - видны как отдельные зерна. В то же время присутствие серого чугуна в композите приводит к образованию свободного графита, что способствует улучшению антифрикционных свойств композита.

Ключевые слова: металлизированные алмазные зерна, связка, шихта, холодное прессование, спекание, горячее прессование, металлоалмазный композиционный материал, структурообразование, износостойкость.

**S.G. AGHBALYAN, N.A. ORDYAN, A.M. MARTIROSYAN, A.S. AGHBALYAN,
KH.V. POGHOSSYAN**

DEVELOPING A TECHNOLOGY FOR OBTAINING COMPOSITE MATERIALS BY HOT PRESSING WITH METALLIZED DIAMOND GRAINS

A new technology has been developed for the manufacture of diamond tools with a bond of 34% Fe+6% Ni+32% Cu+8% Sn+10% WC+10% Cч18 and with titanium metallized diamond grains of HSD90 (AC200) grade, including the processes of manufacturing a composite mixture, cold pressing, sintering, hot pressing and machining. Optimal sintering and hot pressing regimes were selected and substantiated: sintering temperature: $800 \pm 200^\circ\text{C}$, holding time: 0,75...1,0 hour, hot pressing temperature: $850 \pm 10^\circ\text{C}$, holding time: 25...30 minutes, specific pressure: 80...100 MPa, in this case the hardness of the composite is 60...102 HRB, impact strength KCU 2...36 kJ/m², shear strength is 23...160 MPa.

It is shown that the composite material has a heterogeneous structure: the matrix is mainly a mixture of α (hard alloy of tin in copper - with a 13,5% tin content) and δ phases ($\text{Cu}_{31}\text{Sn}_8$), in which solid solutions of α iron and nickel, as well as intermetallic phases with tin and copper, and fillers - grains of graphite and tungsten carbide, are seen as separate grains. At the same time, the presence of gray cast iron in the composite leads to the formation of free graphite, which improves the antifriction properties of the composite.

Keywords: metallized diamond powders, bond, mixture, cold pressing, sintering, hot pressing, metal-diamond composite material, structure formation, wear resistance.

Ն.Գ. ՄԱՀԱԿՅԱՆ

**ԲԱՐՁՐՁԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԻՆՔՆԱՏԱՐԱԾՎՈՂ ՄԻՆԹԵԶԻ ԵՂԱՆԱԿՈՎ
ԵՐԿԱԹ ԵՎ ՄԻԼԻՑԻՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ MAX-ՖԱԶԻ ՍՏԱՑՈՒՄԸ ԵՎ
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ**

Քննարկվում են բազմաֆունկցիոնալ կոմպոզիտների նոր դասի ստացման և հատկությունների ուսումնասիրության հարցերը, որոնք ձեռք են բերվում տարբեր մետաղական փոշիների խառնուրդի բարձրջերմաստիճանային սինթեզի (ԲԻՍ) եղանակով: Նման կոմպոզիտներում ներառվում են MAX ֆազեր:

Կատարված գիտափորձերի արդյունքում ցույց է տվել, որ ֆերոսիլիցիումի, տիտանի, ալյումինիումի, ածխածնի փոշիների խառնուրդից ԲԻՍ մեթոդով կարելի է ստանալ փոշեման զանգված, որը պարունակում է 93% MAX-ֆազ բաղադրությամբ, $(\text{Fe,Ti})_3(\text{AlSi})\text{C}_2$ և 7% զանգվածի չափով ներառումներ, որոնք հարուստ են երկաթի բյուրեղներով՝ Fe_5Si_3 , Fe_3Si և FeSi , որոնք նյութին հաղորդում են մագնիսական հատկություններ, պարունակվում են նաև հիմնական ֆազում չլուծվող TiSi_2 և TiC - 2%-ի չափով:

Նման եղանակով ստացված MAX կոմպոզիտային նյութի միկրոկառուցվածքը, որը սինթեզվում է փոշեմետալուրգիայի (ԲԻՍ սինթեզ) մեթոդներով, ունի շերտավորված, լամինացված բնույթ և կարող է լավ հումք հանդիսանալ ստացված մետաղափոշին տարբեր մետաղափոշիների հետ լեգիրելու համար, որը, անշուշտ, կնպաստի Հայաստանում փոշեմետալուրգիայի զարգացման գործընթացին:

Առանցքային բառեր. MAX-ֆազ, մագնիսական հատկություններ, երկաթ, սիլիցիում, տիտան, միկրոռենտգենասպեկտրային անալիզ, ներդրումներ:

Ներածություն: Այսօր մեծ է հետաքրքրությունը նոր տիպի միացությունների՝ MAX-ֆազերի նկատմամբ, որոնք դասվում են դժվարահալ նյութերի դասին և ընդհանուր առմամբ նկարագրվում են հետևյալ բանաձևով՝ $\text{M}_{n+1}\text{AX}_n$, որտեղ M -ը անցումային կարգի d-մետաղ է (օրինակ, Ti, Fe, Mn, Cr, Co, Ni և այլն), A -ն՝ պարբերական համակարգի IIIԱ կամ IVԱ ենթախմբի տարր (օրինակ, Al, Si, Ge, S, Sn և այլն), X -ը՝ ածխածին կամ ազոտ: MAX-ֆազերն ունեն շերտավոր հեքսագոնալ բյուրեղային կառուցվածք, որոնցում կարբիդային կամ նիտրիդային խմբերը օկտաեդրում խիտ դասավորություն ունեցող $[\text{MeX}]$ ձևով բաժանված են իրարից մոնոշերտ A -ի ատոմներով [1, 2]: Շերտավոր բյուրեղային կառուցվածքը նմանեցվում է լամինատային կառույցի, որում գտնվում են մի քանի տասնյակ նանոմետրի

հասնող MAX-ֆազի հատիկների շերտեր: Շնորհիվ այդպիսի կառուցվածքի՝ MAX-ֆազերը ցուցաբերում են մետաղների և կոմպոզիտների կոմբինացված հատկություններ. մի կողմից՝ մետաղների նման ունեն բարձր էլեկտրական և մագնիսական հատկություններ, մյուս կողմից՝ կոմպոզիտների նման ցածր տեսակարար կշիռ, բարձր ամրություն և առաձգականության մոդուլ, ցածր ջերմային ընդարձակման գործակից, կայունություն օքսիդացման և ջերմային հարվածի նկատմամբ [3-5]:

Աշխատանքի նպատակն է սինթեզել երկաթ և սիլիցիում պարունակող մագնիսական հատկություններով օժտված $(\text{Fe,Ti})_3(\text{Si,Al})\text{C}_2$ տիպի MAX-ֆազ, համապատասխան փոշենման նյութերի՝ Ti-ի, FeSi-ի, Al-ի և ածխածնի էկվիմոլեկուլային հարաբերություններով խառնուրդի բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի եղանակով: Այդ նպատակով կատարվել են փորձարարական հետազոտություններ:


Խտրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Նմուշների սինթեզի համար օգտագործվել են հետևյալ փոշիները՝ FeSi - ΦC-75 (25% Si), 2 մկմ, տեխնիկական ածխածին (մուր) Π-701 մականիշի (99,5%, 2 մկմ), Ti ΠTC (մաքրությունը 98%, մասնիկների միջին չափսը 100 մկմ), ալյումին ΠA-4 (99%, 50 մկմ): Նշված նյութերի փոշիները զանգվածային որոշակի չափաբաժիններով խառնվել են ճենապակյա տարայի մեջ՝ մինչև համասեռ զանգվածի ստացումը: Սինթեզն իրականացվել է մթնոլորտային ճնշման պայմաններում տիտան-ռենիում համաձուլվածքից պատրաստված ռեակտորում, որի մեջ նախապես լցված է ավազ: Ավազի կենտրոնում փոս է արվել, որի մեջ տեղավորվել է բովախառնուրդը: Որպես հարուցիչ օգտագործվել է Ti և C-խառնուրդը: Շիկացած լարով սկիզբ է դրվում FհՄ գործընթացին: Այրման ալիքը տարածվում է վերնից ներքև, և սինթեզվում է համաձուլվածքը: Այրումը տևել է 25...30 մրկ, որից հետո համաձուլվածքը սառչում է: Մեխանիկական եղանակով համաձուլվածքն անջատվել է խարամից և ենթարկվել վերլուծության ռենտգենաֆազային անալիզի եղանակով: Ֆազային բաղադրության ուսումնասիրությունն իրականացվել է ռենտգենային Ultima IV (Rigaky) դիֆրակտորի միջոցով $\text{CuK}\alpha$ -ճառագայթմամբ: Նմուշների կառուցվածքի ուսումնասիրությունն իրականացվել է «Mira» տեսածրող էլեկտրոնային միկրոսկոպի միջոցով «Tescan» ֆիրմայի արտադրության (Չեխիա) «Aztec» անալիզատորով: FհՄ գործընթացով MAX-ֆազի ստացման սարքի աշխատանքը նկարագրված է [6,7] աշխատանքներում:

Логический вывод искусственного интеллекта (ИИ), в частности - обработка нейронных сетей в реальном времени, требует чрезмерно больших вычислительных мощностей, тем самым открывая большую область для исследования и проектирования новых устройств ускорения ИИ. Примерами таких устройств являются Nvidia Jetson, Google Coral. Имеются также решения FPGA, такие как FPGA Xilinx, для применения ИИ. В зависимости от требований приложения, выбор этих устройств может быть трудным, так как самыми главными факторами в основном являются скорость и точность, но имеются приложения, которые требуют низких мощностей и цен. Таким образом, исследование и сравнение этих устройств применения, с точки зрения скорости, памяти, потраченной мощности и цены для выбранной сферы, позволят выбрать правильное устройство для поставленной задачи. Проведен анализ для задачи оценки глубины изображения, используя в качестве устройств применения Jetson Xavier NX и Coral Dev Board.

Ключевые слова: искусственный интеллект, нейронная сеть, оценка глубины, Jetson Xavier NX, Coral Dev Board.

Գ.Ե. ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԻԼԻՑԻՈՒՄԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՀԱԿԱԱՆԴՐԱԴԱՐՁՆՈՂ
ՄԱԿԵՐՆԵՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.
ՄԱՍ 1. ՕՂՏԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Ժամանակային տիրույթի վերջավոր տարբերության մեթոդով մոդելավորվել և փորձ-նականորեն հետազոտվել են սիլիցիումային արևային էլեմենտների տարբեր տեսքերի անհարթություններով (միկրոկառուցվածքային բուրգ, նանոկառուցվածքային անցք, պուն և կոն) հակաանդրադարձնող մակերևույթների օպտիկական բնութագրերը: Ցույց է տրվել, որ առավել արդյունավետ են կոնաձև անհարթություններով մակերևույթները, որոնք ձևավորվում են ռեակտիվ իոնային խաճատմամբ սև սիլիցիումի առաջացման ռեժիմում: Քննարկվել է արդյունաբերական նշանակությամբ արևային էլեմենտներում միկրո- և նանոկառուցվածքային հակաանդրադարձնող մակերևույթների հիբրիդային կիրառման նպատակահարմարությունը:

Առանցքային բառեր. արևային էլեմենտ, հակաանդրադարձնող մակերևույթ, սև սիլիցիում, օպտիկական բնութագրեր:

Ներածություն: Միլիցիումային արևային էլեմենտների օպտիկական կորուստների փոքրացման արդյունավետ մեթոդներից է հակաանդրադարձնող մակերևույթների կիրառումը: Դրանք մակերևութային կանոնավոր կամ անկանոն տեղաբաշխված ծակոտիների, ասեղիկների, բուրգերի կամ փոսիկների տեսքով տեքստուրաներ են, որոնք, ըստ անհարթությունների չափսերի, կարող են լինել միկրո- կամ նանոկառուցվածքային [1-5]:

Ընդհանուր առմամբ, լուսային ճառագայթների հետ հակաանդրադարձնող մակերևույթների փոխազդեցությունը բացատրվում է հետևյալ երկու սահմանային մեխանիզմով [5-8].

1. Միկրոկառուցվածքային մակերևույթների դեպքում, երբ անհարթության բնորոշ Λ չափսը մեծ է ընկնող լուսային ճառագայթների ալիքի λ երկարությունից ($\Lambda > \lambda$), հարևան անհարթություններից տեղի են ունենում բազմաթիվ անդրադարձումներ՝ հանգեցնելով ճառագայթների ծուղակավորման: Արդյունքում՝ էականորեն նվազում է ընկնող լուսային ճառագայթների անդրադարձումը, և դրանք հիմնականում կլանվում են:

2. Նանոկառուցվածքային մակերևույթների դեպքում, երբ փոխազդեցությունը տեղի է ունենում ենթաալիքային տիրույթում ($\Lambda < \lambda$), առաջնային է դառնում տեքս-

տուրայում բեկման ցուցի օպտիկապես փոքր խտությամբ միջավայրից ավելի մեծ խտությամբ միջավայր գրադիենտային փոփոխությունը՝ հանգեցնելով բազմաշերտ օպտիկական ծածկույթների նմանակությամբ անդրադարձման նվազմանը:

Բնականաբար, լայնաշերտ ճառագայթման դեպքում այս երկու մեխանիզմն էլ գործում են, իսկ յուրաքանչյուրի ներդրումը կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ անհարթությունների չափսերից և տեսքից:

Գրականությունում ինչպես տեսականորեն, այնպես էլ փորձնական ճանապարհով լայնորեն հետազոտվել են հակաանդրադարձնող մակերևույթների օպտիկական և էլեկտրական բնութագրերը՝ կախված անհարթությունների չափսերից (բարձրություն, հիմքի մակերես, պարբերականություն) [9-16]: Սակայն գրեթե բացակայում են դրանց տեսքերին առնչվող նմանատիպ հետազոտությունները: Մինչդեռ տեքստուրավորման տարբեր տեխնոլոգիական մեթոդներ հանգեցնում են տարբեր տեսքերի անհարթությունների ձևավորմանը՝ միկրոկառուցվածքային բրգաձև (անիզոտրոպ ընտրողական քիմիական խաժատում) [9, 10], նանոկառուցվածքային անցքեր (էլեկտրաքիմիական խաժատում ծակոտկեն սիլիցիումի առաջացման ռեժիմում) [15, 16], նանոկառուցվածքային սյունաձև (էլեկտրոնա-ճառագայթային լիտոգրաֆիա) [17], նանոկառուցվածքային կոնաձև (ռեակտիվ իոնային խաժատում սև սիլիցիումի առաջացման ռեժիմում) [11, 12] և այլն:

Աշխատանքում (Մաս 1) իրականացվել է տարբեր տեսքերի անհարթություններով հակաանդրադարձնող մակերևույթների օպտիկական բնութագրերի համեմատական վերլուծություն: Էլեկտրական բնութագրերի հետազոտությունների արդյունքները կներկայացվեն Մաս 2-ում:

Մոդելավորում: Հակաանդրադարձնող մակերևույթները դիտարկվել են որպես երկչափ համակարգեր, որոնք պարբերական են երկու ուղղություններով և սահմանափակ են երրորդ ուղղությամբ: Հետազոտվել են համակարգեր, որոնց միավոր բջիջները ներկայացնում են կանոնավոր միկրոկառուցվածքային բուրգ և նանոկառուցվածքային անցք, սյուն և կոն:


Միկրոկառուցվածքային հակաանդրադարձնող մակերևույթների օպտիկական հատկությունները կարելի է թվայնորեն մոդելավորել երկրաչափական օպտիկայի տեսությամբ՝ կիրառելով ճառագայթների հետազոտման (ray-tracing, RT) մեթոդը [6, 8]: Վերջինս ներառում է բազմաթիվ երկրաչափական ճառագայթներից յուրաքանչյուրի անդրադարձման-կլանման-անցման դիտարկում անհարթություն-օդ սահմանագծային կետերում: Նանոկառուցվածքային մակերևույթների օպտիկական բնութագրերի մոդելավորումն իրականացվում է արդյունավետ միջավայրի մոտարկմամբ (effective medium approximation, EMA), վերջավոր տարրերի մեթոդով (finite element method, FEM), խիստ զուգակցված ալիքի վերլուծությամբ (rigorous coupled-wave analysis, RCWA), մատրիցային փոխանցման մեթոդով

(transfer matrix method, TMM), հարթ ալիքների մեթոդով (plane wave method, PWM) և այլն [18-22]:

Ընդհանուր առմամբ, սիլիցիումային արևային էլեմենտներում կիրառվող նանոկառուցվածքային մակերևույթների անհարթությունների չափսերը համեմատելի են սիլիցիումի համար «աշխատանքային» հանդիսացող սպեկտրի տեսանելի տիրույթի ալիքների երկարությունների հետ՝ $\lambda \sim 400...800$ նմ: Ուստի հակաանդրադարձնող մակերևույթների օպտիկական հատկությունների մոդելավորումը սահմանային այս կամ այն մեթոդով կարող է հանգեցնել զգալի սխալանքների:

Ելնելով վերոնշյալից՝ մեր կողմից ընտրվել է ժամանակային տիրույթի վերջավոր տարբերության (finite-difference time-domain, FDTD) մեթոդը, որը մեծ ճշտությամբ հաշվի է առնում ճառագայթների հետ անհարթությունների փոխազդեցության երկու մեխանիզմն էլ և, հետևաբար, կարող է միաժամանակ կիրառվել ինչպես միկրո-, այնպես էլ նանոկառուցվածքային մակերևույթների դեպքում [19, 23-25]: Կիրառվել է FDTD Solutions (Lumerical Solutions Inc, Canada) առևտրային ծրագրային փաթեթի Rough Surface (version 8.17.1072, 2017a) մոդուլը, որը հնարավորություն է տալիս, կախված պարբերական համակարգի միավոր բջջի տեսքից, չափսերից, ալիքի երկարությունից և անկման անկյունից, ստանալ և 2D/3D արտապատկերել հակաանդրադարձնող մակերևույթների անդրադարձման և կլանման սպեկտրները:

Մոդելավորման ընթացքում դիտարկվող հարթ պարբերական համակարգերը բնութագրվել են հետևյալ բազային պարամետրերով՝ h -բարձրություն, d -տրամագիծ (բուրգի դեպքում՝ հիմքի ներգծող շրջանագծի տրամագիծը), t -պարբերականություն: Նկ. 1-ում որպես օրինակ ցուցադրված են կոնաձև բջջով պարբերական համակարգի լայնական հատույթը, տեսքը վերևից, եռաչափ պատկերը և FDTD Solutions ծրագրային փաթեթով ստացված գրաֆիկական տեսքը:



Նկ. 1. Կոնաձև բջջով պարբերական համակարգի լայնական հատույթը, տեսքը վերևից, եռաչափ պատկերը և FDTD Solutions ծրագրային փաթեթով ստացված գրաֆիկական տեսքը


Նանոկառուցվածքային մակերևույթների համար ընտրվել են բազային պարամետրերի հետևյալ բնորոշ արժեքները՝ $h=600$ նմ, $d=150$ նմ և $t=250$ նմ: Միկրոկառուցվածքային բրգաձև մակերևույթի դեպքում այդ պարամետրերի բնորոշ արժեքները հետևյալն էին՝ $h=4,0$ մկմ, $d=5,0$ մկմ և $t=6,0$ մկմ: Օպտիկական գրգռումն իրականացվել է լայնաշերտ ($\lambda = 250...1400$ նմ) ալիքների աղբյուրով:

Մոդելավորվել են պարբերական համակարգերի անդրադարձման $R(\lambda)$ և թափանցիկության $T(\lambda)$ սպեկտրները, իսկ կլանման սպեկտրը որոշվել է $A(\lambda) = 1 - R(\lambda) - T(\lambda)$ արտահայտությամբ: Նկ. 2-ում բերված են միկրոկառուցվածքային բուրգի և նանոկառուցվածքային անցքի, սյան և կոնի տեսքերով միավոր բջիջներով պարբերական համակարգերի մոդելավորման արդյունքում ստացված անդրադարձման, կլանման և անցման սպեկտրները: Համեմատության համար այնտեղ զետեղված են նաև հարթ (առանց անհարթությունների) մակերևույթների համապատասխան սպեկտրները:


Ինչպես երևում է ստացված սպեկտրներից, հակաանդրադարձնող մակերևույթները հանգեցնում են լայնաշերտ տիրույթում անդրադարձման գործակցի զգալի նվազմանը և կլանման գործակցի մեծացմանը: Նվազագույն անդրադարձում դիտվում է սպեկտրի ամբողջ տեսանելի տիրույթում և ինֆրակարմիր տիրույթի կարճալիքային միջակայքում: Ուլտրամանուշակագույն տիրույթում ճառագայթների զգալի մասն անդրադառնում է, իսկ ինֆրակարմիր տիրույթի երկարալիքային միջակայքում՝ հիմնականում թափանցում: Միկրոկառուցվածքային բրգաձև բջիջներով համակարգերն իրենց օպտիկական բնութագրերով զգալիորեն զիջում են նանոկառուցվածքային համակարգերին, որոնցից առավել արդյունավետ են կոնաձև բջջով պարբերական համակարգերը:

Նկատված օրինաչափությունները կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով: Նախ՝ նանոկառուցվածքային հակաանդրադարձնող մակերևույթներն ունեն ավելի մեծ մակերես, քան միկրոկառուցվածքային բրգաձև մակերևույթը: Դա էական է ճառագայթների ծուղակավորման արդյունավետության տեսանկյունից: Այնուհետև, նանոկառուցվածքային կոնաձև միավոր բջիջների դեպքում, բեկման ցուցիչի փոփոխությունը սահուն է՝ ի հակադրություն անցքի և սյան տեսքերով բջիջների, որոնց համար այդ փոփոխությունը կտրուկ է: Տեսակականորեն հիմնավորվել և փորձերով հաստատվել է, որ սահուն փոփոխվող բեկման ցուցիչներով բազմաշերտ հակաանդրադարձնող ծածկույթները միաշերտ ծածկույթների համեմատ ավելի արդյունավետ են [7, 21, 26]:


Փորձնական հետազոտություններ: Պատրաստվել են փորձնական նմուշներ, որոնց հակաանդրադարձնող մակերևույթներն ունեն միկրոկառուցվածքային բուրգի և նանոկառուցվածքային անցքի և կոնի տեսքերով անհարթություններ: Որպես ելակետային կիրառվել են Չոխրալսկու մեթոդով աճեցված, բյուրեղագիտական (100) կողմնորոշմամբ, 2,0...10,0 *Օմ.սմ* տեսակարար դիմադրությամբ և երկկողմանի ողորկված P-տիպի միաբյուրեղային արևային դասի սիլիցիումային հարթակներ: Հարթակների չափսերը կազմում են 100x100 *մմ*, իսկ հաստությունը՝ 350 *մկմ*:



ա)



բ)




գ)

Նկ. 2. Տարբեր տեսքերով միավոր բջիջներով պարբերական համակարգերի անդրադարձման (ա), անցման (բ) և կլանման (գ) սպեկտրները

Նանոկառուցվածքային կոնաձև (սև սիլիցիում) և անցքի տեսքով (ծակոտ-կեն սիլիցիում) անհարթություններով հակաանդրադարձնող մակերևույթների

ձևավորումն իրականացվել է համապատասխանաբար ռեակտիվ իոնային և էլեկտրաքիմիական խաճատման մեթոդներով: Սև սիլիցիումի պարամետրերի միջինացված արժեքներն են՝ $h=640$ նմ, $d=130$ նմ և $t=245$ նմ, իսկ ծակոտկեն սիլիցիումի՝ $h=670$ նմ, $d=155$ նմ և $t=270$ նմ: Միկրոկառուցվածքային բրգաձև անհարթությունները ձևավորվել են քիմիական ընտրողական խաճատման մեթոդով կալիումի հիդրօքսիդի (KOH) լուծույթում: Անհարթությունների պարամետրերի միջինացված արժեքները հետևյալն են՝ $h=4,1$ մկմ, $d=5,3$ մկմ և $t=5,8$ մկմ:

Դիտարկված հակաանդրադարձնող մակերևույթների JEOL JSM-6700F մանրադիտակով ստացված լայնական կտրվածքների բնորոշ SEM (scanning electron microscope) միկրոֆոտոպատկերները բերված են նկ. 3-ում:



Նկ. 3. Սև սիլիցիումի (ա), ծակոտկեն սիլիցիումի (բ) և քիմիական ընտրողական խաճատմամբ ձևավորված (բ) հակաանդրադարձնող մակերևույթների լայնական կտրվածքների SEM միկրոֆոտոպատկերները

Օպտիկական չափումներն իրականացվել են լաբորատոր նշանակության T70 UV-VIS սպեկտրաֆոտոչափով ճառագայթման ալիքների երկարության $\lambda = 300...1100$ նմ տիրույթում՝ համագումարող գնդի (integrating sphere) կիրառմամբ: Ալիքի երկարության փոփոխման քայլը կազմում է $5...10$ նմ, իսկ չափման սխալն է $2...5\%$: Ստացվող սպեկտրային կախվածությունները գրանցվել, մշակվել և պահպանվել են ավտոմատ: Համեմատական վերլուծությունների համար գնահատվել են նշված սպեկտրային տիրույթում անդրադարձման գործակցի նվազագույն (R_{min}), առավելագույն (R_{max}) և միջին կշռված (R_{WAR}) արժեքները: Վերջին պարամետրը հաշվարկվել է հետևյալ արտահայտությամբ.

$$R_{WAR} = \frac{\int_{300nm}^{1100nm} R(\lambda)S(\lambda)d\lambda}{\int_{300nm}^{1100nm} S(\lambda) d\lambda},$$

որտեղ $R(\lambda)$ -ն և $S(\lambda)$ -ն, ալիքի երկարությունից կախված, համապատասխանաբար անդրադարձումը և AM1.5 ստանդարտ թեստային պայմաններում լուսային ֆոտոնների հոսքն են:

Աղյուսակում խմբավորված են տարբեր տեսքերի անհարթություններով հակաանդրադարձնող մակերևույթների օպտիկական բնութագրերը:


Հակաանդրադարձնող մակերևութների օպտիկական բնութագրերը

Հակաանդրադարձնող մակերևութ	$R_{min}, \%$	$R_{max}, \%$	$R_{WAR}, \%$
Հարթ	31,81 ($\lambda=990$ նմ)	64,83 ($\lambda=300$ նմ)	38,72
Միկրոկառուցվածքային բուրգ	10,43 ($\lambda=1000$ նմ)	32,52 ($\lambda=300$ նմ)	14,19
Նանոկառուցվածքային անցք	2,66 ($\lambda=580$ նմ)	23,8 ($\lambda=1100$ նմ)	6,33
Նանոկառուցվածքային կոն	1,05 ($\lambda=870$ նմ)	23,6 ($\lambda=1100$ նմ)	2,67


Ինչպես երևում է աղյուսակից, միկրոկառուցվածքային բրգաձև անհարթություններով մակերևութներն իրենց օպտիկական բնութագրերով ($R_{WAR} = 14,19\%$) զիջում են նանոկառուցվածքային հակաանդրադարձնող մակերևութներին ($R_{WAR} = 2,67 \dots 6,3\%$): Լավագույն օպտիկական բնութագրեր ունեն սև սիլիցիումից հակաանդրադարձնող մակերևութները ($R_{WAR} = 2,67\%$): Փորձնական արդյունքները որակապես համապատասխանում են մոդելավորման արդյունքներին: Քանակական որոշակի անհամապատասխանությունները պայմանավորված են փորձնական նմուշների և դրանց մոդելների բազային պարամետրերի տարբերություններով, ինչպես նաև չափման սխալանքով:

Տրամաբանական է ենթադրել, որ միկրո- և նանոկառուցվածքային անհարթությունների համատեղ (հիբրիդային, հիերարխիական) կիրառումը կհանգեցնի հակաանդրադարձնող մակերևութների արդյունավետության որոշակի մեծացմանը: Այդպիսի լուծում առաջարկվել և քննարկվել է [5, 27-30] աշխատանքներում: Մասնավորապես, սպեկտրի տեսանելի տիրույթում գրանցվել են գրեթե զրոյական անդրադարձումներ, որը բացատրվում է ճառագայթների իդեալական ծուղակավորմամբ և ներթափացմամբ՝ համապատասխանաբար միկրոկառուցվածքային և նանոկառուցվածքային անհարթությունների միջոցով:

Մեր կողմից պատրաստվել են հակաանդրադարձնող մակերևութներով նմուշներ, որոնցում հաջորդաբար կատարվել են քիմիական ընտրողական և ռեակտիվ իոնային խաճատումներ՝ ձևավորելով նանոկառուցվածքային կոնաձև ասեղիկներով պատված միկրոկառուցվածքային բրգաձև անհարթություններ: Անհարթությունների լայնական կտրվածքների բնորոշ SEM միկրոֆոտոպատկերները նշված խաճատումներից հետո ցույց են տրված նկ. 4-ում, իսկ նկ. 5-ում բերված են այդ նմուշների անդրադարձման փորձնական սպեկտրները:



Նկ. 4. Անհարթությունների լայնական կտրվածքների SEM միկրոֆոտոպատկերները քիմիական ընտրողական (ա) և հաջորդող ռեակտիվ իոնային (բ) խաճատումներից հետո



Նկ. 5. Նմուշների անդրադարձման սպեկտրները քիմիական ընտրողական (1) և հաջորդող ռեակտիվ իոնային (2) խաճատումներից հետո

Ստացված արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նանոկառուցվածքային հսկաանդրադարձնող մակերևույթների համեմատ հիբրիդային մակերևույթների անդրադարձման գործակցի միջին կշռված արժեքը նվազում է ընդամենը 0,23...0,41 %-ով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նանոկառուցվածքային մակերևույթների հսկաանդրադարձման արդյունավետությունը 2,2...5,3 անգամ մեծ է միկրոկառուցվածքային մակերևույթների արդյունավետությունից: Հետևապես՝ հիբրիդային հսկաանդրադարձնող մակերևույթների կիրառումն արդյունաբերական նշանակությամբ արևային էլեմենտներում նպատակահարմար չէ, քանի որ տեխնոլոգիական գործընթացի բարդացումը չի նպաստում այդ մակերևույթների օպտիկական բնութագրերի էական լավացմանը:

Եզրակացություն: Միլիցիումային արևային էլեմենտների հսկաանդրադարձնող մակերևույթների արդյունավետությունը կախված է ոչ միայն անհարթությունների չափսերից, այլև դրանց տեսքից: Լավագույն օպտիկական բնութագրերն ունեն նանոկառուցվածքային կոնաձև անհարթություններով սև սիլիցիումից հսկաանդ-

բաղադրվող մակերևույթները: Միկրո- և նանոկառուցվածքային անհարթությունների հիբրիդային կիրառումը հանգեցնում է հակաանդրադարձող մակերևույթների անդրադարձման գործակցի որոշակի փոքրացմանը, սակայն նպատակահարմար չէ կիրառել արդյունաբերական նշանակությամբ արևային էլեմենտներում՝ պայմանավորված տեխնոլոգիական գործընթացի բարդացմամբ:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21AG-2B011 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Photocurrent Enhancement in Thin Film Silicon Solar Cells by Combination of Anti-reflective Sub-wavelength Structures and Light-trapping Textures / **H. Sai, T. Matsui, K. Saito**, et al // Prog. Photovolt.- 2015.- V. 23.- P. 1572–1580. DOI: 10.1002/pip.2594.
2. Anti-reflective Surfaces: Cascading Nano/microstructuring /**Y. Nishijima, R. Komatsu, S. Ota**, et al // APL Photonics.- 2016.- V. 1 (7).- P. 076104 1-11. DOI: 10.1063/1.4964851.
3. **Soudi N., Nanayakkara S., Jahed N., Naahidi S.** Rise of Nature-inspired Solar Photovoltaic Energy Convertors // Solar Energy.- 2020.- V. 208 (15).- P. 31-45. DOI: 10.1016/j.solener.2020.07.048.
4. **Boden S., Bagnall D.** Moth-eye Antireflective Structures. In Encyclopedia of Nanotechnology.-New York, Springer, 2012.- P. 1467-1477. DOI: 10.1007/978-90-481-9751-4_262.
5. Fabrication of Hierarchical Moth-eye Structures with Durable Superhydrophobic Property for Ultra-broadband Visual and Mid-infrared Applications / **Litong Dong, Ziang Zhang, Lu Wang**, et al // Applied Optics. – 2019.- V. 58 (24).- P. 6706-6715. DOI:10.1364/AO.58.006706.
6. **Deinega A., Valuev I., Potapkin B., Lozovik Y.** Minimizing Light Reflection from Dielectric Textured Surfaces // J. of the Optical Society of America A.- 2011.- V. 28 (5).- P. 770-777. DOI: 10.1364/JOSAA.28.000770.
7. **Raut H.K., Ganesh V.A. Nairb A.S., Ramakrishna S.** Anti-reflective Coatings: A Critical, In-depth Review // Energy Environ. Sci.- 2011. – V. 4.- P. 3779–3804. DOI: 10.1039/c1ee01297e.
8. **Saive S.** Light Trapping in Thin Silicon Solar Cells: A Review on Fundamentals and Technologies // Prog. Photovolt. – 2021. – V. 29 (10). – P. 1125-1137. DOI: 10.1002/pip.3440.
9. **Deinega A., Valuev I., Potapkin B., Lozovik Y.** Antireflective Properties of Pyramidally Textured Surfaces // Optics Letters .- 2010.- V. 35 (2).- P. 106-105. DOI: 10.1364/OL.35.000106.
10. **Baker-Finch S.C., McIntosh K.R., Terry M.L.** Isotextured Silicon Solar Cell Analysis and Modeling // IEEE J. of Photovol.- 2012.-V. 2 (4).- P. 457 - 464. DOI: 10.1109/JPHOTOV.2012.2206569
11. **Ayvazyan G.Y.** Crystalline, Porous and Black Silicon: Research and Application.- Yerevan: Chartaraget, 2020.- 240 p.
12. Review Application of Nanostructured Black Silicon / **J. Lv, T. Zhang, P. Zhang**, et al // Nanoscale Res. Lett.- 2018.- V. 13.- P. 1-10. DOI: 10.1186/s11671-018-2523-4.
13. Optimization of the Optical Properties of Nanostructured Silicon Surfaces for Solar Cell Applications / **Di Zhou, Y. Pennec, B. Djafari-Rouhani**, et al // J. of Appl. Phys. – 2014.- V. 115.- P. 134304 1- 10. DOI: 10.1063/1.4870236.
14. **Arias M, Briceño M., Marzo A., Zárate A.** Optical and Electrical Properties of Silicon Solar Cells by wet Chemical Etching // J. Chilean Chem. Soc.- 2019.- V. 64 (1).- P. 4268-4274. DOI: 10.4067/s0717-97072019000104268.

15. **Omar K., Salman K.** Porous Silicon Solar Cell with Anti-reflection Coating Layer for Efficiency Improved // *Pontr.* – 2016. -V. 72 (5).- P. 190-208. DOI: 0.21506/j.ponte.2016.5.32.
16. **Korotcenkov G.** Porous Silicon. From Formation to Application.- CRC Press, 2016.- 439 p. DOI: 10.1201/b19342.
17. Optical Properties of High Aspect Ratio Plasma Etched Silicon Nanowires: Fabrication-induced Variability Dramatically Reduces Reflectance / **A. Smyrnakis, E. Almpanis, V. Constantoudis**, et al // *Nanotechnology.* - 2015.- V. 26.- P. 085301 1-12. DOI: 10.1088/0957-4484/26/8/085301.
18. Application and Validity of the Effective Medium Approximation to the Optical Properties of Nano-textured Silicon Coated with a Dielectric Layer / **Tsun Hang Fung, T. Veeken, D. Payne**, et al // *Optics Express.* - 2019.- V. 27 (26).- P. 38645-38660. DOI: 10.1364/OE.27.038645
19. **Han K., Chih-Hung Chang.** Numerical Modeling of Sub-Wavelength Anti-Reflective Structures for Solar Module Applications // *Nanomaterials.*- 2014.- V. 4.- P. 87-128. DOI: 10.3390/nano4010087.
20. **Rahman T., Boden S.** Optical Modelling of Black Silicon for Solar Cells using Effective Index Techniques // *IEEE J. of Photovolt.*- 2017.- V. 7 (6).- P. 1556-1562. DOI: 10.1109/JPHOTOV.2017.2748900.
21. Optical Modelling of Black Silicon using an Effective Medium/multi-layer Approach / **A.A. Elsayed, Y.M. Sabry, F. Marty**, et al // *Optics Express.*- 2018.- V. 26 (10).- P. 13443-13460. DOI: 10.1364/OE.26.013443.
22. **Deinega A., Belousov S., Valuev I.** Transfer-matrix Approach for Finite-Difference Time-Domain Simulation of Periodic Structures // *Phys. Rev. E.*- 2013.- V. 88.- P. 053305 1-10. DOI 10.1103/PhysRevE.88.053305
23. **Deinega A., Belousov S., Valuev I.** Hybrid Transfer-Matrix FDTD Method for Layered Periodic Structures // *Optics Letters.*- 2009.- V. 39 (6).- P. 13443-13460. DOI: 10.1364/OL.34.000860.
24. **Katkov M.V., Ayvazyan G.Y., Shayapov V.R., Lebedev M.S.** Modeling of the Optical Properties of Black Silicon Passivated by Thin Films of Metal Oxides // *J. of Contemp. Phys.*- 2020. – V. 55 (1). – P. 16-22. DOI: 10.3103/S106833722001003X.
25. Anti-Reflection Properties of Black Silicon Coated with Thin Films of Metal Oxides by Atomic Layer Deposition / **G.Y. Ayvazyan., M.V. Katkov., M.S. Lebedev**, et al // *J. of Contemp. Phys.*- 2021. – V. 56 (3). – P. 240-246. DOI: 10.3103/S1068337221030075.
26. The Design and Optimization of an Anti-Reflection Coating and an Intermediate Reflective Layer to Enhance Tandem Solar Cell Photons Capture / **H Sayed, Z.S Matar, M Al-Dossari**, et al // *Crystals.*- 2022.- V. 12 (1).- P. 57-79. DOI:10.3390/cryst12010057.
27. **Cho S.J., An T., Lim G.** Three-dimensionally Designed Anti-reflective Silicon Surfaces for Perfect Absorption of Light // *Chem. Commun.*- 2014.- V. 50.- P. 15710—15713. DOI: 10.1039/c4cc07341j.
28. **Dimitrov D.Z., Chen-Hsun Du.** Crystalline Silicon Solar Cells with Micro/nano Texture // *Appl. Surf. Sci.*- 2013.- V. 266 (1).- P. 1-4. DOI: 10.1016/j.apsusc.2012.10.081.
29. **Ingenito A., Isabella A., Zeman M.** Nano-cones on Micro-pyramids: Modulated Surface Textures for Maximal Spectral Response and High-efficiency Solar Cells // *Prog. Photovolt.*- 2015.- V. 23 (11).- P. 1649–1659. DOI: 10.1002/pip.2606.
30. **Putra I.R., Li J.-Y., Chen Ch.-Y.** 18.78% Hierarchical Black Silicon Solar Cells Achieved with the Balance of Light-trapping and Interfacial Contact // *Appl. Surf. Sci.*- 2019.- V. 478.- P. 725–732. DOI: 10.1016/j.apsusc.2019.02.001.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 02.02.2022:

Г.Е. АЙВАЗЯН

**ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ АНТИОТРАЖАЮЩИХ ПОВЕРХНОСТЕЙ
КРЕМНИЕВЫХ СОЛНЕЧНЫХ ЭЛЕМЕНТОВ
ЧАСТЬ 1. ОПТИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ**

Методом конечных разностей во временной области смоделированы и экспериментально исследованы оптические характеристики антиотражающих поверхностей кремниевых солнечных элементов с неровностями различных видов (микроструктурная пирамида, наноструктурные отверстие, столбец и конус). Показано, что наиболее эффективными являются поверхности с коническими неровностями, которые формируются методом реактивного ионного травления в режиме образования черного кремния. Обсуждена целесообразность гибридного применения микро- и наноструктурных антиотражающих поверхностей в солнечных элементах промышленного назначения.

Ключевые слова: солнечный элемент, антиотражающая поверхность, черный кремний, оптические характеристики.

G.Ye. AYVAZYAN

**EVALUATING THE EFFICIENCY OF ANTI-REFLECTIVE SURFACES OF
SILICON SOLAR CELLS
PART 1. OPTICAL CHARACTERISTICS**

Optical characteristics of anti-reflective surfaces of silicon solar cells with various types of irregularities (microstructured pyramid, nanostructured hole, column and cone) are modeled by the finite-difference time-domain method and experimentally studied. It is shown that surfaces with conical irregularities, which are formed by the method of reactive ion etching in the black silicon formation mode, are the most effective. The expediency of hybrid application of micro- and nanostructured antireflection surfaces in industrial solar cells is discussed.

Keywords: solar cell, anti-reflective surface, black silicon, optical characteristics.

Ն.Դ. ԵԶԱԿՅԱՆ, Ս.Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԲԵՍԵԼԻ ԶՏԻՉԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԼԱԶԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՉԱՓԻ ՖՈՏՈՈՒԺՆԱԴԱՐԱՐԻ
ԲՆՈՒԹԱԳՐՆԵՐԻ ԼԱՎԱՑՈՒՄԸ

Ուսումնասիրվել են գոյություն ունեցող լազերային հեռաչափերը, և կատարվել է համեմատական վերլուծություն: Բնութագրերի հետագա բարելավման համար ընտրվել է Սոն-տ ընկերության լազերային հեռաչափի գործող հանգույցը: Դուրս են բերվել հիմնական հանգույցներում էլեկտրական ազդանշանի տեսքերը: Առաջարկվել է ընդունիչ հանգույցում ավելացնել Բեսելի 4-րդ կարգի գտիչ, որի արդյունքում մեծանում են հեռաչափի զգայնությունը, չափման հեռավորությունը և էներգախնայողությունը:

Առանցքային բառեր. հեռաչափ, ֆոտոդիոդ, ազդանշան, աղմուկ, ուժեղարար, հաճախություն, մոդուլյացիա, գտիչ:

Ներածություն: Հայտնի է, որ լազերային հեռաչափերում բարձր ճշգրտություն ապահովելու համար հիմնականում օգտագործվում է փուլային չափման եղանակը: Այս դեպքում լազերը ճառագայթում է որոշակի ֆունկցիայի տեսքով մոդուլացված լուսային ազդանշան, որի ալիքի երկարությունը գտնվում է ինֆրակարմիր ճառագայթների տիրույթում [1, 2]:


Օբյեկտից անդրադարձած ճառագայթն ընդունում է ֆոտոդետեկտորը, վերածում էլեկտրական ազդանշանի: Ընդունիչի ելքային և հիմնային ազդանշանների միջև առաջանում է փուլային շեղում, որն ուղիղ համեմատական է հեռավորությանը:

Հեռավորությունը որոշվում է հետևյալ բանաձևով [3, 4].

$$D = \frac{c}{2f} \cdot \frac{\varphi}{2\pi},$$

որտեղ c -ն լույսի արագությունն է, f -ը՝ մոդուլյացիայի հաճախությունը, φ -ն՝ փուլային շեղումը: Բանաձևը ճիշտ է, երբ օբյեկտի հեռավորությունը փոքր է մոդուլացված ազդանշանի ալիքի երկարության կեսից: Բարձր հաճախությամբ ազդանշանների փուլի չափման ընթացքում առաջանում են փուլային շեղումներ, որոնք ազդում են հեռավորության չափման ճշտության վրա: Վերջինիս մեծացման համար օգտագործում են մի քանի հաճախությամբ մոդուլացնող իմպուլսներ, իսկ արդյունքները միջինացվում են: Հիմնականում օգտագործում են փուլի չափման հետերոդինային եղանակը:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Գոյություն ունեցող հեռաչափների հայտնի տեխնիկական բնութագրերից ելնելով՝ ընտրել մեծ ճշտությամբ հեռաչափ, կատարել նրա բնութագրերի ուսումնասիրում և լավացում, նաև հեռաչափի զգայնության և էներգախնայողության բարձրացման համար զտիչի մշակում: Աշխատանքում դիտարկված լազերային հեռաչափի կառուցվածքային սխեման բերված է Նկ. 1-ում:



Նկ. 1. Լազերային հեռաչափի կառուցվածքային սխեման:

1 - փուլաչափ, 2 - ֆոտոդիոդի ազդանշանի ուժեղարար, 3,4 - ցածր հաճախականային զտիչներ, 5,7 - մոդուլացնող ազդանշանի գեներատորներ, 6,8 - խառնիչներ, 9 - լազերի սնուցման մոդուլացվող ուժեղարար, 10 - լազեր, 11 - ֆոտոդիոդ

Հեռաչափն աշխատում է հետևյալ կերպ. 5 և 7 գեներատորների ելքերում ստացվում են մոդուլացնող լարումներ, որոնց հաճախություններն իրարից տարբերվում են 5 կՀց–ով և գտնվում են 150...200 ՄՀց տիրույթում: Հեռաչափի որակական պարամետրերը տվյալ եղանակի դեպքում կախված են հիմնականում ֆոտոընդունիչ հանգույցի էլեկտրական բնութագրերից (ուժեղացում, ներքին ազդանշան/աղմուկ հարաբերություն, թողարկման շերտ և այլն), իսկ հաղորդիչ մասում էականորեն կախված են միայն լազերի հզորությունից: Ճառագայթած լուսային ազդանշանը գրանցվում է 11 ֆոտոդիոդի միջոցով, առանձնացվում է ցածր հաճախային (5 կՀց) ազդանշանը և ուժեղացվում [5, 6]:


Հետազոտության արդյունքները: [7]–ում կատարված է մանրամասն համեմատական վերլուծություն առկա լազերային հեռաչափների վերաբերյալ: Դրանից և մի քանի այլ համեմատումներից ելնելով՝ ընտրվել է UNI-T ընկերության հեռաչափը, որի բնութագրերը բերված են Աղյուսակում [8]:

Աղյուսակ

UNI-T ընկերության լազերային հեռաչափի բնութագրերը


Սխալանք, 2 մմ	Հեռավորություն, 120 մ	Չափս, 123x50x28 մմ	Գինը, 115\$
---------------	-----------------------	--------------------	-------------

Վերջիններս ունեն սխալանքի նվազագույն արժեք և չափվող հեռավորության լայն տիրույթ (Աղյուսակ): Սարքը ղեկավարվում է հեռախոսի միջոցով: Չափումները կատարվել են նրա №B707C (Նկ. 2 ա), №B87A (Նկ. 2 բ) մոդելների համապատասխան կետերում:



Նկ. 2. Առկա տպաստիկների տեսքերը երկու կողմից.
ա - B707C տեսքը, բ - B87A տեսքը


Նկ.3-ում բերված է գեներատորների էլքերի ազդանշաններից մեկի տեսքը:



Նկ. 3. Գեներատորի էլքային լարման տեսքը


Ինչպես երևում է նկ. 3-ից, օբյեկտի հեռավորության չափման համար առկա են 4 տարբեր հաճախություններ: Լազերային փունջը ենթարկվում է մանիպուլյացիայի ոչ համաչափ իմպուլսներով, իսկ ինտենսիվությունը մոդուլացվում է 4 տարբեր հաճախություններով:

Առկա հեռաչափի ֆոտոուժեղարարի սկզբունքային սխեման բերված է Նկ. 4-ում: Ֆոտոդիոդից հետո ունենում ենք 1 մՎ-ը չգերազանցող օգտակար ազդանշան, որն ուժեղացվում է ֆոտոուժեղացուցչի միջոցով:



Նկ. 4. B707C-ի ֆոտոդիոդի ուժեղարարի էլեկտրական սխեման


Միկրոկառավարչին է տրվում ֆոտոդիոդի ուժեղացված և գտված լարումը (նկ. 5): Նկ.5ա-ում բերված է ամբողջ ազդանշանը: Մեզ հետաքրքրող 5կՀց բաղադրիչը լավ երևում է հաստատուն բաղադրիչը հեռացնելուց հետո (Նկ. 5 բ):



Նկ. 5. Ֆոտոդիոդի ուժեղացված ազդանշանի տեսքերը.
ա - հաստատուն բաղադրիչով, բ - հաստատուն բաղադրիչը գտած

Չափվող ուժեղարարում գործում են արտաքին և ներքին աղմուկներ, որոնք վատացնում են ազդանշան/աղմուկ հարաբերությունը: Այդ խնդիրը լուծելու համար ֆոտոդիոդից անմիջապես հետո առաջարկվում է դնել գոծիչ, որը կլավացնի հեռաչափի տեխնիկական բնութագրերը (հեռավորություն, զգայնություն, էներգախնայողություն):

Հայտնի է, որ գոծիչներն ունեն անցողիկ պրոցեսներ, որոնք առաջացնում են հապաղում ազդանշանի մեջ, իսկ նույն կարգի գոծիչների դեպքում ամենակարճ անցողիկ պրոցես ունի Բեսելի գոծիչը (նկ. 6) ([9]-ի նկ. 6.26):




Նկ. 6. Բեսելի և Բատերվորդի գոծիչների նորմավորված արձագանքը


Բեսելի գոծիչի դեպքում հայտնի է, որ առաջին կարգի գոծիչի թողարկման շերտը 1,57 անգամ ավելի մեծ է ազդանշանի թողարկման շերտից ([9]-ի §8.13): Նույն աղբյուրից հետևում է, որ առնվազն պետք է աղմուկի համար ընտրել երկրորդ կարգի գոծիչ (10% ազդանշանի կորուստով):

Համեմատության համար բերված են առկա TP1561A (նկ. 7ա) և առաջարկվող գոտիչում օգտագործված AD8599 (նկ. 7բ) գործիքային ուժեղարարների (ԳՈԻ) ներքին աղմուկների սպեկտրային խտության գրաֆիկները [10, 11]: Բնութագրերից երևում է, որ սպիտակ աղմուկների տիրույթում՝ կորերի հորիզոնական մասերում, առկա ԳՈԻ-ն ունի մոտավորապես 20 անգամ մեծ աղմկային պարամետր 1 կՀց-ից բարձր հաճախությունների տիրույթում (27 նՎ/Հց):

Առաջարկվող 4-րդ կարգի Բեսելի գոտիչն անհրաժեշտ է դնել անմիջապես ֆոտոդիոդի և գոյություն ունեցող ուժեղարարի միջև (սովորական լարային միացումով): Նկ. 8-ում բերված են գոտիչի էլեկտրական սխեման (ա) և տպասալիկի տեսքը իրական չափերով՝ 24 մմ*20 մմ(բ):




ա)




բ)

Նկ. 7. ԳՈԻ-ների աղմկային լարման և հաճախության միջև կապը
ա - TP1561A, բ - AD8599



ա)



բ)


Նկ. 8. 4-րդ կարգի գոտիչի սխեման և արտաքին տեսքը.
ա - էլեկտրական սխեման, բ - արտաքին չափսը

Էլեկտրական մոդելավորման ժամանակ օգտագործել ենք Multisim-13 ծրագիրը [12], իսկ տարրերի հաշվարկները վերցվել են ըստ համապատասխան աղյուսակների ([9] –ի աղ. 6.2):

Զտիչի մուտքային դիմադրությունը մի քանի կարգով մեծ է, քան ֆոտոուժեղարարի ելքային դիմադրությունը, զտիչն ունի փոքր ելքային դիմադրություն (որպես հետադարձ կապով գործիքային ուժեղարար), իսկ սեփական ուժեղարարի մուտքային դիմադրությունը՝ հարյուրավոր կիլոհմեր:

Մեր առաջարկած միկրոսխեման ֆոտոդիոդից հետո օգտագործելու դեպքում ուժեղարարի մուտքում կունենանք սեփական աղմուկների մակարդակի իջեցում՝ $M=27$ մԿ/ 1 մԿ=27: Ֆոտոդիոդի ուժեղարարը RC առաջին կարգի զտիչ է (կտրման հաճախությունը 10 կՀց), որի մուտքում գործում է լայնաշերտ աղմուկի հետ խառնված օգտակար ազդանշան:


Որպես օրինակ բերված են սովորական RC զտիչի (նկ. 9ա) և 4-րդ կարգի զտիչի (10 կՀց կտրման հաճախությամբ) ազդանշանների տեսքերը (նկ. 9բ)՝ մուտքային միևնույն պայմանների դեպքում (գործում է միայն լայնաշերտ աղմուկ, Սք-ք = 1 մԿ): Սովորական ուժեղարարում ունենք 150 մԿՎ լայնաշերտ աղմուկ, իսկ միևնույն ժամանակ Բեսելի զտիչի ելքում՝ 120 մԿՎ նեղշերտ աղմուկ:



Նկ. 9. Զտիչների համեմատական գրաֆիկները.

ա - մոդելավորված RC զտիչի մուտքային և ելքային ազդանշանների տեսքերը, բ - մոդելավորված 4-րդ կարգի զտիչի մուտքային և ելքային ազդանշանների տեսքերը

Նկ. 10-ում մուտքում գործում են լայնաշերտ աղմուկ և 5 կՀց ազդանշան՝ Սք-ք=0,5 մԿ: RC զտիչի ելքում ազդանշան/աղմուկ հարաբերությունը 500 մԿՎ/ 150 մԿՎ=3,3 է կամ $10,5$ դԲ, իսկ Բեսելի զտիչի ելքում՝ $1,50$ մԿ/ 120 մԿՎ=12,5 կամ 22 դԲ, և ազդանշանի մեջ բարձր հարմոնիկները չեն երևում օսցիլոգրի մեջ: Արդյունքում ունենում ենք ազդանշան/աղմուկ հարաբերության լավացում $22-10,5=9,5$ դԲ-ով:



Նկ. 10. Չտիչների համեմատական գրաֆիկները

Եզրակացություն: Առաջարկն ունի հետևյալ առավելությունները.

- Եղած սարքի մեջ ոչինչ չփոխելով և ավելացնելով 4-րդ կարգի գոյիչ՝ ստացվում է ազդանշան/աղմուկ հարաբերության մեծացում:
- Արդյունքում հնարավոր է լինում գրանցել ավելի թույլ օգտակար ազդանշաններ:
- Միևնույն հեռավորության չափման դեպքում ստացվում է սխալանքի ավելի փոքր արժեք:
- Թույլատրելի նույն սխալանքի դեպքում կարելի է կա՛մ քչացնել լազերային ճառագայթի հզորությունը՝ ունենալով էներգախնայողություն, կա՛մ մեծացնել չափման հնարավորությունը:
- Մեթոդն, ըստ անհրաժեշտության, կիրառելի է նաև այլ հեռաչափներում:
- Արտադրության փուլում օգտագործելու դեպքում գնի վրա ազդեցություն չի ունենա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Beam Position and Phase Measurement System for the Proton Accelerator in ADS / **L. Zhao, X. Gao, X. Hu, et al** // IEEE Trans. Nucl. Sci.- 2014.- 61.- P. 538-545, doi: 10.1109/TNS.2013.2291779, 2014, p. -1640.
2. **Webster J.G., & Eren H. (Eds.)**. Measurement, Instrumentation, and Sensors Handbook: Electromagnetic, Optical, Radiation, Chemical, and Biomedical Measurement (2nd ed.).- CRC Press, 2014. <https://doi.org/10.1201/b15664>
3. Analysis of Transient Currents in Organic Field Effect Transistor: The Time-of-Flight Method/ **M. Weis, J. Lin, D. Taguchi**, et al // J. Phys. Chem. C. -2009. -113 (43): 18459, doi:10.1021/jp908381b.
4. **Cotter, Robert J.** Time-of-flight mass spectrometry.- Columbus, OH: American Chemical Society, 1994. ISBN 0-8412-3474-4.
5. **Белов И.Ю.** Физические основы оптической дальнометрии: Учебно-методическое пособие для студентов физического факультета, обучающихся по направлению “Геодезия”.- Казань: КГУ, 2009. -72 с.

6. Лебедько Е.Г. Системы оптической локации.- Учебное пособие для вузов. Часть 3.-СПб.: НИУИТМО, 2013. –110 с.
7. Comparison of laser distance measuring instruments: Final report on supplementary comparison EURAMET.L-S20/ **Mariusz Wisniewski**, et al // Metrologia.- Warsaw, April 2014.-Vol. 51, issue 1A, article id. 04002.
8. https://www.uni-trend.com/html/product/Layout/Laser_Distance/
9. **Horowitz Paul and Winfield Hill**. The Art of Electronics.- 3rd ed.- Cambridge University Press, 2015.- 1220 p.
10. https://datasheet.lcsc.com/szlcsc/3PEAK-TP1564A-SR_C97336.pdf
11. https://www.analog.com/media/en/technical-documentation/data-sheets/AD8597_8599.pdf
12. <https://www.multisim.com/>

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ: Նյութը ներկայացվել է խմբագրություն 18.02.2022:

Н.Д. ЕЗАКЯН, С.Г. МАРТИРОСЯН

УЛУЧШЕНИЕ ПАРАМЕТРОВ ФОТОУСИЛИТЕЛЯ ЛАЗЕРНОГО ДАЛЬНОМЕРА С ПРИМЕНЕНИЕМ ФИЛЬТРА БЕССЕЛЯ

Исследованы существующие лазерные дальномеры и проведен их сравнительный анализ. Для дальнейшего улучшения параметров был выбран действующий узел лазерного дальномера фирмы UNI-T. Выделены виды электрических сигналов в основных узлах. Предлагается добавлять в приемных узлах фильтр 4-й степени Бесселя, в результате чего увеличиваются чувствительность, дальность измерения и энергосбережение дальномера.

Ключевые слова: дальномер, фотодиод, сигнал, помеха, усилитель, частота, модуляция, фильтр.

N.D. YEZAKYAN, S.G. MARTIROSYAN

IMPROVING THE PARAMETERS OF A PHOTOAMPLIFIER OF LASER DISTANCE METER BY APPLYING THE BESSEL FILTER

The existing laser distance meters are studied, and a comparative analysis is carried out. For improving the parameters, UNI-T laser distance meter was chosen. Electrical signal types are distinguished in the main nodes. It is recommended to add the Bessel 4-th order filter in the receiving nodes, which increases sensitivity, distance measurement and energy saving of the laser distance meter.

Keywords: distance meter, photodiode, signal, noise, amplifier, frequency, modulation, filter.

**O.H. PETROSYAN, A.M. MOMJYAN, D.S. SHALJYAN,
D.V. MANUCHARYAN**

**A NOVEL METHOD OF POWER REDUCTION FOR A SRAM SENSE
AMPLIFIER WITH A SELF-CALIBRATION MECHANISM**

A latch sense amplifier with a biasing technique is designed and a new self-calibration unit (SCU) of power is presented for static random access memory (SRAM). Calibration of current which is the same as power consumption is calibrated for various frequencies in the range 0.5Ghz to 2.3Ghz. The advantage of such a sense amplifier is to control the current due to the bias-connected, saturated NMOS transistor. The simulation of the SCU scheme is applied in the presented sense amplifier. The results of simulation show that using the proposed SCU, the power consumption can reduce from 19% to 73% depending on frequency. The disadvantage of the proposed amplifier with a biasing technique increases the propagation delay from 8% to 17% depending on frequency.

Keywords: static random-access memory, FinFET, self-calibration, sense amplifier, power reduction, FSM.

Introduction. Shrinking of the device sizes and the increase in the performance requires the solution of a new problem: optimized power dissipation of the system. Nowadays, integrated circuits, including SRAMs can have several operation modes in terms of performance. Besides, due to technological processes and external influences, such as temperature, the operating frequency of the system may change. Therefore, it is necessary to optimize the power consumption of the system for different operation modes and different frequencies.

An important requirement of the SRAM design is the reduction of the power during the data reading process. For that purpose, reduction of power consumption of sense amplifier is required. One of the common types of the used sense amplifier is latch-sense amplifier due to its small area and performance [1]. In this work, as a reference amplifier, basic latch type sense amplifier is selected and a biasing technique to control the current flows during the read operation is applied to it.

A sense amplifier with a biasing technique. For the power consumption and noise resistance, a differential pair can be used as a sense amplifier, in which the current of the differential pairs is regulated by the saturated biased transistor [2]. However, due to the low gain, it is more effective to use latch-type sense amplifier. Obviously the reading frequency and the consumed power are directly

comparable [1,3]. The purpose of the proposed sense amplifier with a biasing technique (Fig. 1) is to calibrate the current for various frequencies.

The MN0 transistor is responsible for enabling the sense amplifier before reading the data from BL and BLB. While recharge is taking place in BL and BLB, EN is equal to logic 0. In this condition, the amplifier is in the operational state and can detect the minor voltage difference (ΔV) between the BL and BLB nodes.

The purpose of additional MN3 biasing transistor is to control the current flowing to the MP6-MN1 and MP5-MN2 branches. During the reading process the MN3 transistor is in the saturation region and it decides the amount of the current that flows.




Fig. 1. A latch-type sense amplifier with a biasing technique

Depending on the reading frequency and the sensitivity threshold, $V_{gs} = V_b$ of MN3 could be different. For the certain f_{SE} frequency appropriate V_b voltage would be selected. The purpose of the latch - type sense amplifier with biasing technique is to restrict or enlarge the current depending on the data reading frequency.

The main problem is that modern IC and SRAMs can operate with various frequencies and the goal is to calibrate the current during the reading process for SRAM sense amplifier [4]. The article proposes a mechanism for self-calibration of power of the sense amplifier in SRAM depending on the established reading frequency.

Architectural overview. The architecture of the SCU mechanism is proposed. The sense amplifier for applying this method is presented in Fig. 1. The main idea of the proposed SCU is to calibrate the V_b bias voltage of the MN3 transistor. The

